

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՆԻԻԹԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՊՐԱԿ Գ.

1. ՊՏՂԱՎԱՆՔԸ ԵՒ ԳՄՐԵԹԱՌՈՐՈՒՄԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅ ՏԱՃԱՐՆԵՐԻ
2. ԴԵՐԵԶՄԱՆԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՆՈՒ ԵՈՐՔ

1944

Archbishop Garekin Hovsepián

MATERIALS FOR THE STUDY OF ARMENIAN ART AND CULTURE

FASCICLE III

1. The Monastery Church of Budghoons (Budghavank) and the Döming of Ancient Armenian Churches.
2. Sepulchral Steles and their Archæological Value for the History of Armenian Art.

NEW YORK

1944

ՈՒՂՆԵԼԻՔՆԵՐ

Ուշադրութիւնից վրիպել են մի քանի սխալներ, որ ընթերցողներն
ինքնին նկատել կարող են եւ հասկանալու դժուարութիւններ չունին:

Բայց ուղղելի են եր. 48 վերջին երեք տողերի դասաւորութիւնը, որ
պէտք է լինի նախ վերջին տողը, եւ ապա առաջին եւ երկրորդ տողերը:

Երկրորդ կարեւոր սխալը պատկեր 102-ն է, որ իսկականին փոխարին-
ուած է 103-ի կրկնութիւնը: Պատկեր 102-ը նոյն կոթողի մի այլ երեսն է,
որ վերեւի քառանկիւնու մէջ Յիսուսի անդրին է, մնացածը նոյն լինելով
102-ի հետ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՆԻԻԹԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՊՐԱԿ Գ.

1. ՊՏՂԱՎԱՆՔԸ ԵՒ ԳՄԲԵԹԱՒՈՐՈՒՄԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅ ՏԱՃԱՐՆԵՐԻ
2. ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ


ՆԻԻ ԵՈՐԲ

1944



A 3160





Հայ Արուեստի Մեծ Աշխատատեղերի

ՍՏՐՑԻԳՈՎՍԿՈՒ ԵՒ Թ. ԹՈՐԱՄԱՆԵԱՆԻ

Յիշատակին

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հրատարակում ենք մեր նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ ընդհանուր վերնագրով աշխատանքների Գ. Պրակը: Նախընթացները արտատպութիւններ էին մեր նախապէս գրած յօդուածների այլ եւ այլ պարբերականների մէջ մաս առ մաս, որ ի մի հաւաքելով, հրատարակել ենք առանձին գրքերով: Այս Պրակը տպագրւում է նոյն չափում, առանց նախապէս երեւալու պարբերականների մէջ, եթէ չհաշուենք մի փոքրիկ հատումը՝ «Հայ եկեղեցիների Գմբեթատման ինդիքը» «Հայաստանի Կոչնակ»-ի մէջ: * Այսպիսի ծաւալով մի գիրք, յատկապէս պատկերների շտապեման պատճառով, անկարելի էր որ եւ է պարբերականի մէջ զետեղել, բայց եւ այնպէս լոյս է տեսնում այն մեր Պրակների չարքում նման չարժանութիւններով, այսինքն հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան մի տեսակ նախապատրաստութիւն, որոշ խնդիրների կամ երեւոյթների լուսարարութեան հետ կապւում: Կը յամուրձ մեզ ամբողջական դարձնել զորքը, Աստուծոյ կամքն է, մեր կենսային տեսողութեան եւ զիտական աշխատանքներով զրադուելու յարմարութիւններից կախում, բայց աշխատում ենք այդ ծրարքով: Մամուլի տակ է Գ. Պրակը, իսկ Ե.—ը պատրաստւում է:

Մենք կը ցանկայինք աւելի խորանալ այս աշխատութեան ուսումնասիրութեան մէջ, նիւթերի բերած նորութիւնն ի նկատի ունենալով, բայց պաշտօնի բերմամբ բազմատեսակ զրադումները արգելք կզան, հակառակ մեր ցանկութեան: Սակայն հաւատում ենք, որ ի դուր չէ նորա հրատարակութիւնը եւ այս վիճակում. այս նիւթերը պէտք է խօսեն ժամանակին իրենք իրենց համար, դրաւելով մասնադէպների ուղադրութիւնը եւ աւելի լայն չափով ուսումնասիրութեան եւ համեմատութեան ենթարկուին. ցաւում ենք միայն, որ Աղցի, Օձունի զերեզմանական կոթողի եւ Պողոսյանքի քանդակների լուսանկարները ձեռքի տակ չունինք այժմ, որոնք աւելի պիտի բարձրացնէին արժէքը նաեւ ընդհանուր քրիստոնէական արուեստի պատմութեան համար: Բայց եթէ այս աշխա-

տութիւնը առիթ լինի նման նիւթերի հաւաքման եւ արուեստի պատմարաններին հետաքրքրէ ամենադոյն չափով, Ստրէկովսկու եւ Թորամանյանի մեծ աշխատանքների կողքին իրեն ամենահամեստ մի լումայ, մենք լիովին վարձատրուած կը համարենք մեզ: Այստեղ չօգտւում է միայն նախնական հայ արուեստի մի հոսանքը. աղերսը իւր հարաւարեւմտեան զրացիներէ հետ:

Ստրէկովսկիի[†] մեծ գործի լոյս տեսնելուց յետոյ՝ Թորամանյանի աշխատութիւնների ժողովածուի հրատարակութիւնը, ** բարձրագոյն ազգայնում են հայ ժողովրդի կատարած գերի մասին Առաջաւոր Ասիայի քաղաքակրթ ազգերի չարքում: Ինչքան եւ մեծ, գնահատելի գործ է կատարուած յիշեալ զիտականների, Մատի, Օրբէլիի, Բախմանի, † Բալայրուշայիտի, †† եւ այլոց ձեռքով, բայց զեւ կատարելիք շատ գործ կայ, անյայտ ի յայտ բերելու, որպէս զի այլ եւ այլ կողմերից եկած մեծ կամ փոքր ճառագայթներով լուսարուրի մեր անցեալ ստեղծագործութեան պատկերը եւ արժանաւոր տեղը ընէ ազգերի եւ նրանց քաղաքակրթութեան պատմութեան մէջ: Հայ ճարտարապետութեան զարդագրութեան ժողովածուն ժամանակագրական կարգով եւ տեղերի ցուցմամբ, օրինակ, ո՛րքան առատ նիւթ կը տար Առաջաւոր Ասիայի ազգերի եւ հայ արուեստի յարաբերութեան եւ լուսարարութեան համար: Մենք գիտենք, որ նկարիչ Ֆէթիպաճեանը այդպիսի մի մեծ ժողովածու ունի, անձամբ հաւաքած իւր ձեռքով հայ վանքերի վրայից եւ մարաթազրած, որ երկար տարիներէ ի վեր մնում է առանց տպագրութեան:

Այս գործը որքան եւ մեծածաւալ չէ, զգալի նիւթական զոհողութիւն, աշխատանք եւ ժամանակ է պահանջել մեզանից, բայց

*Die Baukunst der Armenier.

**Թորոս Թորամանյան. Նիւթեր Հայկական ճարտարապետութեան Պատմութեան. Երևան. 1942:

†Bachman W. Kirchen und Moscheen in Armenien und Kurdistan. Leipzig. 1913.

††Etudes sur l'Art médiéval en Georgie et en Arménie. Paris. 1929.

այտեղ իրենց բաժինն ունին եւ ուրիշները . նախ պիտի օրհնենք Հանգուցեալ Թորամանեանի յիշատակը , որ իւր նեղատիւները տրամադրեց եւ նոյն իսկ թոյլատու եղաւ մեզ նրանցից մի մի օրինակ արտատպութիւն կատարելու , յայտնելով , որ ինքը մասնագէտ չէ պատկերազրութեան մէջ , ուստի եւ անկարող օգտագործելու անձամբ : Նախապէս շատերը դրանցից լուսանկարել էինք անձամբ , բայց ոչ այնչափ յաջող , ինչպէս Թորամանեանինը : Գրքի վերջում պատկերներն ցանկի մէջ յիշուած են նրանից ստացած լուսանկարները : Ապա պարտք ունինք շնորհակալութեամբ յիշելու եւ Պ . Պ . Հայկ Գալուզճեանի , Երուանդ Մալեանի , Ճիմ Չանգալեանի , Արամայիւ Բաղրատունու , Ներսէս Պետրոսեանի , ինչպէս նաեւ Մաճէսթիկ , Աթլանթիկ եւ Գրաֆիկ լուսափորագրչական տնրին , որոնք

Տ . Եղիշէ Վարդապետ Սիմոնեանի միջնորդութեամբ , ձրիարար պատրաստեցին քրքիւր , առանց աղպիսի օգնութեան դժուար կը լինէր մեզ հոգալ տպագրութեան : Եւրոյ ծախսերը : Ծնորհակալ ենք եւ Պ . Արմէն Յովասարեանին , որ մեզ օգնել է տպագրութեան եւ մասամբ սրբագրութեան տեխնիքական աշխատութիւնները մէջ :

Տարարադարար Պտղնիի մասին վերջէրս մի ոռւս գիտնականի կողմից կատարուած Ուսումնասիրութիւնը տեսնել չկարողացանք , ինչպէս եւ Թ . Թորամանեանի վերեւ յիշած աշխատութիւնն օգտագործել , որ միայն վերջին օրերը նուէր ստացանք Պ . Ա . Անդրէասեանից , երբ ամբողջ գործը շատուած էր եւ մամուլի տակ :

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ



Այսինքն ժամանակի մենք պատմություն հասկանալ չենք կարող. այդ ճշմարտություն է, ինչպէս պատմութեան միւս երեսը թեւորի, նոյնպէս և արուեստի կոթողների նկատմամբ: Թուականով հին եկեղեցիներ քիչ ունինք համեմատաբար, այն էլ ոչ վաղ, քան եօթներորդ դարը: Դրանց վերայ պէտք է աւելցնել և այնպիսիները, որոնք թուականներ կամ արձանագրական աղբյուրներ չունին, բայց պատմական-գրական տեղեկութիւններով դիտենք նրանց ժամանակը: Դոցանից հնագոյնը Աւանն է, Զ. դարի վերջերից,* Մոյսէս Եղուարդեցու հակաթոռ՝ Յովհան կաթողիկոսի կողմից շինուած. Հոփսիմէն՝ ժամանակակից աղբյուրների և արձանագրութիւնների հիման վերայ, 618 թուից. նոյն դարի երեսնական թուականներին շինուած ևս Գալիանէն, Բաղարարն, Մատարան, Ալյամմար, Մրենը, Բաղրեւանդի Ս. Յովհաններ կամ Բաղդասար, Թալինի փոքր եկեղեցին. վեց հարիւր քառասնական թուերին Զուարթնոցը, վեց հարիւր վաթսուական թուերին Արուսի Ս. Գրիգորը և Եղուարդի Ս. Թէոդորոսը:

Այս տուեալներն, ի հարկէ, չատ կարելորդ նշանակութիւն ունին մեզ համար. կարելի է տակ է. դարի հայ ճարտարապետութեան,

դարդարանդակի, նաև պատկերաքանդակի մասին այս կոթողները իրենց բազմազանութեամբ, ձևի և յարդարանքի կողմից, տալիս են որոշ և պայծառ դադափար: Մանօթանալով այս շէնքերին, կարող ենք որոշել նաև այնպիսի շէնքերի մօտաւոր ժամանակը, որոնք թուական չունին, աւելի ճիշդ, մենք կարող ենք նրանց postguem-ը կամ antiquem-ը, ամենաուշ կամ ամենավաղ ժամանակները որոշել. որովհետև այդ շէնքերը ներկայացնում են մի ծաղկեալ վիճակ, կարող եմ ասել ոսկէդար, չառ կարճ ժամանակի համար, այն է է. դարի առաջին կէտը: Բայց այսքանը բաւական չէ հայ ճարտարապետութեան պատմութիւնը հասկանալու համար. մեզ համար մութ է նրանց ծագման, դարդացման ընթացքը մինչև է. դարը: Այդ շէնքերը իրենց ամբողջութեամբ սունկի նման չեն բուսել երկնքից իջած դարնան մի յորդ անձրևով, նորա իրենց հոյակապ զեղարուեստական կատարելութիւններով դարդացման երկար պատմութիւն պիտի ունեցած լինին մինչև իրենց շինութեան բուն ժամանակը: Մենք գիտենք հայ ճարտարապետութեան ծաղկեալ վիճակը միայն, բայց ոչ նրա սկզբնաւորութեան և տեղույթեան ժամանակը մինչև է. դար: Լուամ ենք գիտամար բաղլիլիկ եկեղեցիների մասին, որովհետև նրանցից ոչ մէկը թուական չունի:

Բայց կա՞ն աւելի հնագոյն եկեղեցիներ իրական մնացորդներով: Եկեղեցական տաճարութեամբ այդպիսի մի կոթող էմփիանդի վանքն է, որի ծաղումը հասնում է մինչև Գ. դարի սկիզբը, երբ քրիստոնէութիւնը պետական կրօն հրատարակուեցաւ. Հայաստանում: Բայց ամեն մի համբալ տակ կարող է, որ ներկայ շէնքը այնքան փոփոխութեան է ենթարկուած, որ նորանով դադափար չի կարելի կազմել սկզբնական վիճակի կամ ձևակերպութեան մասին, այլ

* Այս աշխատութիւնը գրուած է շատ տարիներ առաջ. այժմ, երբ աչքի եմք անցնում վերջնականապէս, մամուլին յամօժելու համար, «Լրաբեր» քերթի մէջ տեսա՞մք, Յուլիս 26, 1941, Խորհ. Հայաստանից անուած լուրը, տաճարի երկնաշէն Յոհան հակաքոռ կարողիկոսի յունարէն արձանագրութեան մի մասի գիւտի վերաբերեալ նշումը, հաւանութեամբ ակնարկի շուրջը կատարուած պղծման ժամանակ:

պէտք է մասնագէտի մանրակրկիտ եւ խորա-
թախանց ուսումնասիրութիւն, ինչպէս այդ-
փորձել է Թորամանեանը, մօտաւոր եւ են-
թադրական ձեւը վերականգնելու համար:
Ուստի եւ ամենայն մի նորութիւն, ճշգրտած,
ի հարկէ, պատմական տուեալներով, որ մեր
ծանօթութիւնը հայ ճարտարապետութեան
աւելի հնազոյն դարերն է տանում, շատ զը-

տեղեկութիւնը մեզ տալիս է Շահաթուն-
եանը. «յայտ դիւղ Պտղընի գտանի աւերակ
մեծի եկեղեցոյ ի կոփածոյ քարանց»:^o Ապա
Ժէ. դարի առաջին կիսի համար Զաքարիա
սարկաւազը պատմում է, որ Պարսիկներն ու
Շամանցիք ընդհարուել են մի աւերակ զիւղի
հօտ գոր կոչի Պտղունա»:^{**} վերջապէս ամե-
նահին տեղեկութիւնն ունինք Ղեւոնդի կող-



Պատկ. 1

նահատելի պիտի համարուի հայ արուեստի
նախնական պատմութեան հասկացողութեան
համար: Մեղ թւում է, թէ այդպիսի մի ա-
ւերակ ունինք Պողոսեանքում, ներկայումս
Պտղընի կոչուած, որ գտնուում է Քանաքեռի
եւ էլլառ կայարանի մէջ, խճուղուց դէպի հիւ-
սիս, ճորի մէջ:

Բ.

Այս եկեղեցու մասին առհասարակ մեր
նոր բանասիրութեան մէջ ոչինչ չկայ. միակ

մից, ի՛ երբ յիշում է Աբարեանի մէկ ընդհարու-
մը Հայոց հետ, «՝ դիւղն Պտղուն:ս եւ ի Թա-

*Ստորագրութիւն եմ. 1842, եր. 162:
Առաջին ամգամ լսել եմ այդ աւերակի մա-
սին մկարիչ Ֆէք-վանեանից:


**Պատմագրութիւն. 1870. Բ. եր. 17:
Ի՛լեռնդ Պատմագիր. Կրատ. Եգեանի Ս.
Պետրարդ. 1887. եր. 144:

լին և Ի Կոլոր, 733—ական թուականներին :

Տարարազդարար ձևերի տակ շունինք յատակադինք, որ պատրաստել էր հարա-
բաղեաւ եղիպարեանցք մեր ներկայու-
թեամբ, բնթերցողներին մնում է մօտաւոր
զազաղիար կազմել լուսանկարով (Պատկ. 1) :
Հաստակադինքն ինքն բոտ ինքեան նորա հնու-
թեան մասին չառ բան տալ չի կարող. երկա-

կոշում, գիւղում նման մի եկեղեցի, Գըն-
թունեաց մի շէնք, որի մասին խօսք կը լինի
յետոյ :

Ընթերցողը առաջարկում լուսանկարից
տեսնել կարող է, որ կործանում է ոչ միայն
զմբեթք, այլև արեւմտեան և արեւելեան
պատերը. կանգուն է միայն հիւսիսայինը,
(Պատկ. 2), արեւելեան և արեւմտեան պա-



Պատկ. 2


րածից շէնք է այն, որմնայեցնելի վերայ
հաստատում զմբեթով : Այս ձևի հնազոյն
յայտնի եկեղեցին Արուծի Ս. Գրիգորն է՝
Մամիկոնեան Գրիգոր իշխանաց իշխանի կող-
մից կառուցուած 668 թ. և ապա երազդա-
ւորաբ. զարի վերջերում Սմբատ Ա.—ի կող-
մից : Ունինք և Արազածի արեւելեան կողմը
Արարանի մասայիշէն, այժմ Մուլաղաբմ

տերի անկիւններով, և հարաւային պատը
կիսով չափ, այն էլ զբոյց ուսումնասիրելի
միայն վերին կէս մասով. ներքեւի մասը
հարաւային կողմից ծածկուած է նոր եկե-
ղեցու շէնքով : Բայց այսչափն էլ բաւական
է եկեղեցու ձևի և յատակադին մասին լի-
ովին զազաղար կազմելու, մանաւանդ թեթեւ
պեղումներով պարզուեցաւ ափսոյի և յա-

բակից սենեակները ձեռն ու հիմնապատերը։ Ախրից բոլորակ է ներսից․ բոլորակ են նաև կողքի սենեակները արեւելեան կողմից, որ դրսից տնկիւնաւոր են եւ միայն ավախի մօտ բոլորականում են եւ խորշ կազմում։ Պտղավանքը ախրի արտաքին մասով զանազանում է իւր նմաններից, օրինակ Արուսից (Պատկ․ 3), որին նման է նաև Հոխի-

մար։ Միջանկեալ յայտնենք, որ այդպիսի կրկնաշարի սենեակներ կան Հոխիսիմէի տիպի աւելի հին տաճարի հարաւային կողմից՝ Աղիեաման գիւղում, Արաղածի արեւմտեան լանջերին, Կաթսարականների շէնք։ Հոխիսիմէն չունի երկրորդ յարկի սենեակները։

Արեւմտեան պատը ուղիղանկիւն էր․ մը-



Պատկ․ 3

սիմէն (Պատկ․ 4) այս կէտում։ Սենեակները կամարակապ էին եւ սրանց վերայ կար կրկին սենեակ երկարութեամբ արեւմուտքից արեւելք ձգուած, բայց ոչ շատ բարձր, տեղացիներից շատերը տեսել են այդ սենեակները չքանդուած վիճակում․ այս երեւոյթը արժանի է ուշադրութեան հայ ճարտարապետութեան ուսումնասիրութեան հա-

նացած է հիւսիսային կողմի մի մասը, նաև լուսամուտը կիսով չափ․ նման (Պատկ․ 1) մի լուսամուտ էլ ձախից հարաւային կողմից պիտի լինէր, եւ ապա բարձր պատի ճակատին երրորդը, ինչպէս հիւսիսային պատից մակարերել կարող ենք։ Ներքեւում արեւմուտեան դուռն էր։ Այս մասում էլ համեմատելի Արուսի արեւմտեան պատի հետ (Պատկ․

5), միայն վերջինս ճակատին իրար կից զոյգ լուսամուտներ ունի:

Համեմատաբար ամենից լուս. է պահուստը հիստալին պատը (Պատկ. 2), որ և լիովին զազափար է տալիս եկեղեցու կազմութեան մասին զրոյից և ներսից: Պահուստը է հիստալին զուռը իւր վիթխարի ճակատաբարով և զուռն ընկած կամարով. զրան երկու կողքերից մի մի լուսամուտ, ապա զէպի արեւմուտք ձգուած թևի վերայ

մուտ, մինչդեռ նոյն աեղում Արուճը, բնահանարար, երկուսն ունի:

Ճիշդ նոյն կազմութիւնն ունէր արտաքուստ և հարաւային պատը. ներսից նկատելի է հիստալին զրան զէմ ու զէմ և հարաւային զուռը. իսկ զրոյից զէպի արեւելք ձգուած թևի վերայ երկու լուսամուտ, երրորդը՝ աւելի ցած ընկած լուսամուտը՝ պիտի լինէր, որ քանդուած է ամբողջ պատի հետ: Այստեղ ևս, պատի ճակատին, կայ մի



Պատկ. 4

զոյգ լուսամուտներ, պատկներն իրար միացած. արեւելեան թևի վերայ սրանց ուղղութեամբ միայն մի լուսամուտ է, իսկ երկրորդն էլ բիշ ցած, որ սենեակի համար էր: Այս անհամաչափութիւնը ճշգրտեամբ կրկնուած է և Արուճի վերայ, մի տարբերութեամբ, որ այնտեղ մի մի լուսամուտ աւելի է երկու կողմից, չէնքի աւելի մեծ լինելու պատճառով: Հիստալին պատի ճակատին, զրան զլիւին, զարձեալ մի լուսա-

լուսամուտ, իսկ զէպի արեւմուտք ձգուած թևի քանդուած լինելու պատճառով, նկատուած է միայն մի լուսամուտի կէս մասը:

Հիստալին պատի և տանիքի մնացորդները (Պատկ. 2), թէ զրոյից, թէ ներսից, զարձեալ մեկ լիովին զազափար են տալիս ամբողջի կազմութեան մասին. նա նման է եռանաւ բաղնիք չէնքի կտուրի, ճակատ կազմող պատի երկու կողմից զէպի արեւելք և արեւմուտք ձգուած է կողքի նեղ նաւի

(բաղրիկայի համեմատութեամբ) թէք կը-
տուրը, ապա բարձրանում է միջին կամարի
հիմք կազմող աւելի բարձր պատը, որ միա-
ցած էր հանդիպակաց հարաւային պատին
բարձր կամարով, ինչպէս եռանաւ բաղրիկի
չէնքի միջին, բարձր նաւի պատերն ու կա-
մարը: Այդ պատի վերայ, արեւմտեան թեւին
նկատւում են չորս փոքր քառանկիւնի բաց-

կորը, երեքոյքը, Օձունը, բացի Աշտարակի
Կարմրաւոր Աստուածածնից, որ դրսից խա-
շածեւ մատուռ է, ոչ ուշ, քան է. դարը:

Բայց Պողոսովանքը եռանաւ բաղրիկայ
չէ, նախ կոտուրը դրսից խաշածեւ էր, այդ
դիրքն ստացած զմբեթի պատճառով, որ բուն
բաղրիկաները չունին. ապա կողքի նաւերի
փոխարէն, դուրս ընկած որմայեցների կի-



Պատկ. 5

ուածքների առանց զարդի կամ պսակների,
ինչպէս սովորական լուսամուտներն ունին,
որ շատ կարեւոր նշանակութիւն ունին այս-
տեղ երեւան եկած արուեստի հոսանքները
հասկանալու համար:


Կոտուրը ծածկուած էր կղմինդրով, որից
բաղմաթիւ կոտորներ դտանք, ինչպէս մեր
բաղրիկի բոլոր հին չէնքերը, Քասախը, Տի-

սախոյակների վերայ հաստատուած երեք ա-
ղեղներ (Պատկ. 1), որոնք ընդարձակում են
ներսի տարածութիւնը ըստ լայնութեան եւ
ըստ երկարութեան: Միջին աղեղները ան-
կիւններից կապուած էին իրար հետ կամա-
րազօտիներով, որոնց վերայ հանդչում էր
զմբեթը: Պահուած են միայն հիւսիսային
ու արեւելեան կամարազօտին, երկու աղեղ-

ներով և աղեղնամէջերով և դժբեթի հիմքի փոքրիկ մնացորդով (Պատկ. 6) :

Ոչ մի կասկած չկայ, որ Պողոսանքը երկարամիջ մի շէնք էր, դժբեթաւոր, առանց անջատ մօյմերի, չափ երեւոյթներով կապ-

կէր 6) , հէլլենիստական ազդեցութեան ազդեցութեան մէկը Միջագետքի վերայով. մեր հարաւորակցութեան մէջ վերջին երեւոյթները Զուարթնոցում և Բանայում : Այդ ազդեցութիւնը ապա աչքի է ընկնում եկեղեցու պատկերաքանդակներով և դարդաքան-




Պատկ. 6

ում Միջագետքի բաղիլիք շէնքերի հետ : Հէնց առաջին հերթին ընթերցողի ուշադրութիւնից չպիտի վրիպէ աղեղների հիմք կապմով կիսախոյակները իրենց դարձումներով, որ յոնիական խոյակների հետքերն են (Պատ-

կաններով : վերջիններ հարաւային պատի արտաքին տեսանլի մասը. մնացածը ծածկումն էր եկեղեցու հիստորային պատով. վերեւի նկարագրութիւնից երեւեցաւ, որ դռնից դէպի արեւելք եղած թեւի վերայ մնա-

ցել են երկու լուսամուտ - առաջինը, որ դրան աւելի մօտ էր, պսակ ունի պատկերաքանդակներով դարդարուած, վերին աստիճանի հետաքրքրական. պսակի կեղրոնում, ուղիղ լուսամուտի ճակատին երկու թեւաւոր եւ սաւառնող հրելատակներ բռնել են Յիսուսի, սկաւառակի վերայ քանդակուած մեղալիտներ, աւետարանը ձախ թեւով կրծքին սեղմած, ապա երկու կողմից երեք նման մեղալիտներ շարուած դէպի պսակի ցած իջնող թեւերը, որ առաքեալներին դասն է, բոլորն էլ լուսապսակով, ինչպէս եւ Քրիստոսն ու սաւառնող հրելատակները:



Պատկ. 7

Քրիստոսն եւ առաքեալներին ներքնադիւստի վերայից ձգուած է վերնադիւստ, ուշադրութեան արժանի ծալքաւորումներով, ոչ յունա-հռոմէական, այլ արեւելեան ձեւով: Քրիստոս եւ առաքեալները մօրուք ունին, եւ դիլի մաղբը ճակատի վերայ հասարակալս կտրուած եւ վերից վար սանտրուած, կարծես հատ հատ: Պատկերներն էլ մակերևութից շատ քիչ դուրս ընկած, այսինքն հարթաքանդակ: Յիսուսի դէմքի վերին մասը եղծուած է մասամբ, բայց երեւում են մօրուքը եւ ուսերի վերայ թափուած մաղբը:

Պսակի հորիզոնական թեւերի վերայ,

նայողի ձախ կողմից, քանդակուած է մի ձիաւոր, վաղող ձիու վերայ, աղեղը քաշել է առիւծի կամ վաղրի վերայ, պարզ չէ: Զիւաւորը հագել է մինչեւ ծնկները հասնող դօտեւորած բաճկոն, կիսադէմ, գլխարկի ձեւն անորոշ, յետէի կողմից շարդուած լինելու պատճառով. շարդուած են մասամբ եւ քիթն ու բերանը: Մասամբ տեղի փոքրութեան եւ մասամբ գուցէ եւ որսը վերաւորուած ցոյց տալու նպատակով, առիւծը հանուած է անընական: Ընդհակառակը վատ չէ վաղող ձին զեղարուեստական բնականութեամբ, պոչի հանդոյցը սասանեան

արուեստի մէջ ընդունուած ձեւով. երեւում է ձիու թաճըր, սաճըր եւ սրչակալը դարդարանքներով: Այս պատկերաքանդակի գլխին դրուած է ՄԱՆՈՒԵՂ ԱՄԱՏՈՒՆԵԱՏ ՏԷՐ, երէք բառից բաղկացած մի թանկարժէք արձանադրութիւն, որ ոչ միայն տաճարի հիմնադիրն է մատնանշում, այլ եւ հայ հնադրութեան ամենահին մնացորդներից մէկն է, Չ. դարի առաջին կիսից, ինչպէս կը տեսնեմք, երբ չէնք ծագման ժամանակը կը պարզենք:*

*Ամբողջ միջին, ուղղամիկն երկաթագրով. ուշադրութեամբ արժանի է, որ ց բռնորդի ձեւով է. տ-ը փոքր իմէ փչացած է:

Պատկերի միտ թևերն, նայողի աջ կողմից, վերջին մեղալիսն պատկեր տակ, նկատում է մի սիրամարդ, պուշր վեր բարձրացրած, բայց առանց փակյալ, իսկ բուն թևեր վերայ ձախ ոտով նսնկ է չոթել մօրուքով և պլիսի դանդուր մազերով մի մարդ, նիզակն ուղղած յարձակուող ասիւծի վերայ:

Այս լուսամտուից զէպի ձախ արևմտաբ, տեսնում ենք մի արձաւենի, տակը տարած կանգնած, դռնէր փորք ինչ կտրած, պուշր կախ երկու տաների մէջ: Սրանից զէպի արևմտաբ քանդակի մի մնացորդ սր-

կը, ողկույղի և տերեւի փոխվիտի շարքով, զնդաձևերից կազմուած զարդը բոլորակներէ մէջ, բոլորք յատուկ են մեր հնագոյն բաղրիկաներին, ինչպէս Քասախն (Պատկեր 7, 8) է կամ Ալեքսանի բաղրիկաները (Պատկեր 20) իրենց դռներէ հակառակքերէ քանդակներով, Ե-2. զարքի զործեր: Քասախի ամբողջ շէնքի պայտաձև և կամարները, անաղարտ մնացած է հարաւային նաւը, հարաւային և մանաւանդ արևմտական դրան հակառակքերէ քանդակը, խաչի պորտին և թևերին զնդակները, խա-




Պատկ. 8

թառունկ, տերեւով և տելի բարձր, հարաւային պատի հակառակ լուսամտի մնացնորդն է, խաղողի և տերեւի փոխվիտի շարքով, որից զէպի արևելքը հետևեալ արձանագրութիւնը կայ. «Եւ Յովա ևս ծառայայ ևս սուրբ խաչին», զարձեալ միջին երկաթագրով, բայց ոչ նախնիքացի մամանակից: Պատկերաքանդակներով զարդարուն լուսամտուից զէպի արևելք կայ զարձեալ մի լուսամտու, պատկեր երկդաւոր կիսագնդակներից բաղկացած: Արձաւենին, որ թառուն-

չի երկու կողմից եղջերուները և մանաւանդ արձաւենի ծառերը, յայտարարն են նորա միջագետական արևելքի և ոչ ուշ քան Ե-2. զարք: Քասախի և նման խաչակների զոյսութիւնը, որպէս միջագետական հասանքի աղբնցութիւն, հաստատում է Սարգիսովսկին, համարելով Դ-Ե-2. զարքերի զործ: *

*Die Koptische Kunst. Խր. 65, պատկ. 85: 7334:

Հիւսիսային պատը շատ աւելի առատ
 քեր. դրան կողերի եւ կամարի դուրս
 ճանի մակերոյթը ծածկուած են իրար
 շնորհիւ պահպանողով, որ սովոր-



Պատկ. 9

նոյնանում են է. դարի մեղ յայտնի եկեղեցիների լուսամուտներին, ինչպէս Արուսի եւ Հռիփսիմէի վերայ, բայց եւ բոլորովին տարբարկան չէ նոյն ձեւով է. դարի տաճարների քանդակագործութեան մէջ, այլ երեւում են միայն հնագոյն գերեզմանական կոթողների

վերայ, որից մի արինակ տալիս ենք անժի-
ջապէս (Պատկ. 9) դադարաւ կազմելու հա-
մար։ Ապա դէպի աջ դոյզ լուսամուտների
իրար միացած պատկների պաշտածու զար-
դարանդակների մէջ իրար հետևող թուշու-
նների շարքը յիշեցնում են ասորական Բա-
բելոնյան աւետարանի կամ մեր հին, Ժ. դա-
րի աւետարանների կամարները, իրենց վե-

րայի թուշուներով (Պատկ. 10), համեմատե-
լի նաև Ալլիքի Դ. դարի դամբարանի դրան
կենդանական քանդակների հետ, որոնց մա-
սին խօսք կը լինի յետոյ։ Մծբնում Մար
Յակոբ (Mar Jacob) եկեղեցին, շինուած 338
կամ 359 թուին, ունի ձևի կողմից դոյզ լու-
սամուտներ իրար կցուած, ինչպէս Պաղա-
վանքում, բայց պատկների քանդակները
տարբեր։* Անտիօր է նաև լուսամուտնե-



Պատկ. 10

րէց բարձր զարնէղի զարդաքանդակը առթ-
ների շարքից կազմուած։ Ապա արևմտեան
պատին հիւսիսային կողմի բարձր լուսամու-
տի պատկը շուշանածաղիկներից կազմուած,
որ ինչպէս կը տեսնենք, աստանեան-հեղե-


*Strzygowski. L'ancien Art Chrétien de
Syrie. պատկ. 87: Sarre und Herzfeld. Archaeo-
logische Reise in Euphrat und Tigris-Gebiet.
Band II. 342-343.



նիստական, միջազետական շրջանին է յատուկ: Շուշանածաղիկները այս քանդակը վերջիններից մէկը պիտի համարել հայ ճարտարապետական քանդակագործութեան մէջ: Է. զարի եկեղեցիների վերայ չենք նկատում

Գ.

Այժմ փորձենք պարզել Պողոսյանքի ծագման ժամանակը. հէնց առաջին հայեացքից կարելի է ասել, որ Է. զարի կէսերից ուշ է, եթէ համեմատելու լինինք նոյն դա-



Պատկ. 11

ալը մոտիւր, բացառութեամբ Զուարթնոցի, այն էլ բաւական ալլափոխուած, որ նոյնպէս միջազետական շատ տարբեր ունի:

րի թուականով մեղ յայտնի եկեղեցիների հետ: Արտաքին կառուցուածքը, լուսամուտների զարդաքանդակները, ամբողջ շէնքի շուրջը որպէս պատուանդան երեք աստիճանները, յատուկ միայն մեր հին եկեղեցիներին, համոզում են մեղ առանց այլեւայլութեան այս տպաւորութեան ճշմարտութեան

մէջ: Բայց հէնց մեր առաջ գրուած սրինակն էլ ցոյց է տալիս միեւնոյն ժամանակ, թէ ս'րբան զգուշ պիտի լինինք աշպիտի խրն-դիրենքում: պատճառն այն է, որ թուակա-նով յայտնի եկեղեցիների շրջանը աւելի չէ, քան կէս դար, բայց նման անթուական չէն-բերի թիւն աւելի մեծ է, որ կարող են աւելի չին լինել ևս ևն, քան թուականով եկեղեցի-ները:

Բարերադպարար Պողոսիանքի և մի շարք վանքերի համար մենք ունինք մատենագրա-կան մատերական և հիշող տեղեկութիւններ է: դարի սկզբից, որոնց վերայ հարկաւոր

տանի եպիսկոպոսներից ոմանք: Սրա հակա-ռակ ժամանակի կաթուղիկոսական տեղապահ Վրդանէս քերթող ևս Սմբատ Բագրատունին աշխատում են խմբել եպիսկոպոսութիւններն ու վանահայրութիւնները հայրապետական աթոռի շուրջը ևս միութիւն հաստատել: Այդ պիտի մի միութեան ձևնարկ Ապրուէլի Խոս-րովի փէ: տարուց, որ համապատասխան է 606 թ., հասել է մեր ձեռքը: Մի շարք ե-պիսկոպոսների և վանքերի հայրերի հետ ձևնարկին կամ միութեան թղթին ստորա-դրել է ևս «Խորայէլ Պողոսիանք»: Այս վա-ւերականը մեր ձեռքն է հասել Գիրք թղթո-



Պատկ. 12

ուշագրութիւնը չենք դարձրել մինչև այժմ: Գիրք թղթոցի մէջ պահուած ձևնարկներն են դրանք կամ եկեղեցական ժողովների ար-ձանագրութիւններ: Յայտնի է, թէ Ձ. դա-րի վերջերում ինչպիսի՞ երկրպագութիւն-ներ էին ծաղկել հայաց եկեղեցում, Մօրիկ կոյսեր վարած քաղաքականութեամբ, և ներսում ծաղկած երկպառակութիւնների ու դատանարանական վէճերի պատճառով: Հա-յրապետական աթոռից բաժանուել էին ոչ միայն Վրացիք, այլ ևս նման ձգտումներ էին ցոյց տալիս Արուսեաները, Սիւնիք և Բրիգան-դական կայսրութեան մաս կազմող Հայաս-

ցի և Ուխտանէսի պատմութեան մէջ, վեր-ջինս Ժ. դարի պատմիչ է: Պողոսիանքը դո-յութիւն ունէր, ուրեմն, արդէն է. դարի սկզբում ևս մէկն էր այն վանքերից, որոնց հայրերի ստորագրութիւնը նշանակութիւն ունէր Հայրապետական աթոռի միութեան պահպանութեան համար: Այսպիսով նորա ծաղկման ամենուշ ժամանակի հաստատուն սահմանն ունինք, որ 606 թուականն է:

Բայց այս վաւերականը շատ աւելի ու-շագրաւ է հայ ճարտարապետութեան պատ-մութեան համար, քան թուում է մեզ առա-ջին աղագից. ձևնարկին ստորագրողներն

են «Արբանյակ» սրբոյ կաթողիկէի վանից եւրեջ, աշխնքն ինքնաձեռն, Վստմէլ սրբոյ Հոսիսիմէի, Բարիւրաս (Բարեղաս) սրբոյ Յոհաննու վանաց, Սոսրով Աւականու, Յաւիտեան Աղիվարայ, Դաւիթ Երեւանայ, Իսմայէլ Գառնոյ, Յունանէս Աւանի, Իսրայէլ Պաղօվանից, Ջոշիկ Արամուռից (Թղ. Երեւանից), Յոհաննիկ Արտաւաղայ ապարանից, Աբաս եւ Որդեակ եւ Արբանյակ Փարպիոյ, Միքայէլ Աղից, Գորգիս, Ուխտանէս, Գրիգորիս Արծոյ, Կողմաս Ուրդայ, Մայէն միւս Արծոյ, Յոհաննիկ Արծափաց, Սիմոն Դատ աւանից, Ուխտանէս Դարունից, Սամոտ Բաղարանի եւ այլ վանից երկցամբ հանդերձ։*

Այս ցանկը մեր առաջ դնում է մի վարմանալի իրողութիւն, որ հայ ճարտարապետական արուեստի մասնագէտները ուշադրութեան կը մատուցանէինք. նախ այստեղ յիշուած եկեղեցիները մեծ մասը բաղիլիկ կիւղեցիներ են, որոնք մնացորդներն ունինք մենք։ Յոհաննայ վանքի ներկայ շինութիւնը ԺԳ. դարի ստեղծագործութիւն է, բայց նորահիւստային կողմը կայ մի նաւանի եկեղեցի, որի մի քանի նշաններէց պարզ է, թէ նա է. դարեց առաջ հիմնուած մի շէնք է, մեծ նորոգութեան ենթարկուած, բայց եւ հնազոյն մնացորդներով, որպիսին մուտքի կողայսիւններն են (Պատկ. 11)** եւ ներսից պայտածեւ կամարի մի մնացորդ, որ մեր հին եւ բաղալիք եկեղեցիներէն են յատուկ։ Յոհաննայ վանքը յիշուած է 603-606 թ. թ. վաւերական եւ ժամանակակից թղթերի մէջ*** Այսպէս ուրեմն խորին հնութեան հիմք ունի այն աւանդութիւնը, թէ նա շինուած է Լուսաւորչի ձեռքով, ուրեմն Դ. դարի սկզբում։ Օշականի եկեղեցին նոյնպէս բաղիլիկայ էր, յատակագծի մնացորդներէց դատելով, այլ եւ նկարիչ Կուսիկեանի ձեռքով պատրաստուած նկարից, որ այժմ գտնուում է ինքնաձեռն մատենադարանում. այդ եկեղեցին յիշուած է Ե. դարի առաջին կիսում, Ս. Մեսրոպի թաղման առթիւ։†

*Գիրք քրքոց. եր. 151:

**Պատկ. 11 համեմատելի նրբոյժի հաբաւ արեւելեան դրամ կողապիւններին. Strz. 413, աւելի միշտ իրիմցի. 133. եր.

***Գիրք քրքոց. եր. 111:

†Կորիւմ եր. 45. վեմնտիկ:

Աղիվարդի, նաեւ Եղուարդ կոչուած, երկու բաղիլիք եկեղեցիները մեզ յայտնի դարձան ինչիկ վարդապետի պեղումներով, մէկը երեք նաւանի, ոչ ուշ քան Զ. դարի կէսերը, իսկ միւսը մէկ նաւանի, աւելի հին։ Հին գերեզմանատանը, բլրի վերայ, կայ երրորդ մի նաւանի մատուռ, կիսախոյանիներէ քանդակներով նման Գառնիկ կամ Տիւկորին։ Գառնիկ եկեղեցին նոյնպէս բաղիլիկայ է, մնացած է հիւսիսային պատը իւր որմայեցներով եւ այլ մնացորդներ։ Փարպից յիշատակուած են երեք հայեր, երկու բաղիլիկաների աւերակները դոյութիւն ունին մինչեւ այսօր, մէկը Տիւկորի եւ Գառնիկի նման խոյաններով, իսկ միւսը մի նաւանի, ԺԳ. դարում բերդի վերածուած, եւ հաստ պատերով ամրացուած դրսից, ուստի եւ աւելի լաւ պահուած լուսամուտների շատ արխայիկ կամարներով, հաւասարակող խաչներով եւ այլն։

Աղցի եկեղեցու հետքերը ցոյց են տալիս, որ նա մէկն է մեր հնազոյն բաղիլիկ եկեղեցիներէն. նրա մօտի ստորերկրեայ շէնքը Դ-Ե. դարի դործ, դէմ առ դէմ երկու գերեզմաններ պատի մէջ փորուած, կատակոմբաների նման, կողքերի սալաքարերը քանդակներով ծածկուած. հարապիւրիւ երկու բաժաններով. մէկը հաւասարակող խաչէ պսակի մէջ (Պատկ. 12), հորիզոնական թեւերին դէմ առ դէմ մի մի աղանի, բոլորակի մակերևոյթը ծածկուած որթատուռի ողկոյղով, ծէլով եւ տերեւով։* Միւսը մարդկային մի մերկ ֆիգուր, որ նետահար է արեւ դիմացի վարադին։

Հիւսիսային դամբարանի սալաքարի քանդակը բուսական է եւ բոլորովին եղակի հայ հին քանդակագործութեան մէջ։ Տարբարաբար մեր շանքերը պայծառ լուսանրկարելու, առանց լուսաւորութեան միջոցներին, անյաջող անցան. իսկ բոլորակի մէջ խաչը լուսանկարուած է Ալխարբէգի էստամբաթից։ Դամբարանի մատրան դրան կողաքարերի եւ կամարի վերայի քանդակները կենդանիներ չարքով եւ ճակատի փոքրիկ հաւասարակող խաչով, նոյնպէս նո-

*Տես մեր «Հաւառց Թառի Ամեմափրիկ»-ը, Երուսաղէմ. 1937, եր. 47:

րա հնութեան ապացոյցներէց մէկն է :* Համարում ենք Դ. դարի դուրծ : Ըստ Խորենացու Ալլցըր ամարանոց էր ևւ հայ թագաւորների զերեզմանատուն : Եկեղեցին էլ հաւանորէն նոյն ժամանակից : Այստեղ ևս ունինք զերեզմանական քառանկիւնի կոթողների մը-

Արուճում ևս եղել է մի բաղիլիք շէնք, աւելի հին, քան Գրիգոր Մամիկոնեանի շէնած Երկարածիդ մեծ տաճարը 668 թ. , որի մի խոյակը Քասախի կամ Տիկորի ձեւով ևւ քանդակով , բերել ենք Էջմիածնի թանգարանը :* Եթէ մեր կողմից աւելացնենք Արարատ-



Պատկ. 13

նացուրդ պատկերաքանդակներով , որ յատուկ էր , ինչպէս կը տեսնենք , բաղիլիկաների շրջանին :

*Մեր յօդուածը Տարսնի Ս. Ղազարի կամ Առաքելոց վանքին դուռը : Զուարթնոց (Բալուեսնի) Տարեգիրք. 1937, եր. 148 :

Եւն Երկրի կեղրոնական շրջաններում եղած բաղիլիկները մեզ յայտնի չենքերը , կ'ստանաք մի ստուար բաղմութիւն : Հաւանորէն մի բաղիլիք չէնք է եղել հին Վաղարշապատում ,

*Strzygowski. Die Baukunst, պատկ. 439, 440, 441.

բացի հինգ յայտնի տաճարներից եւ Զուարթ-
նոցին կից հին բաղրիկայի միացորդից, որ
երեւան եկաւ խաչիկ վարդապետի պեղում-
ներից յետոյ, որովհետեւ Գայանէի վանքից
քիչ դէպի արեւմուտք դոնուած են բաղրիկը
չէնքի քանդակներով միացորդներ եւ դերեղ-
մանական մի կոթող, որ բերուած էին էջ-
միածնի թանդարանը, եթէ դրանք եղբ կա-
թուղիկոսի շինած ներկայ տաճարից առաջ
եղած մատուռի շրջանից չեն։ Ապա բաղրիկը
չէնքերի միացորդներ կան իւրաքանչիւր դոնուած
Աշտարակում, Ղրղրլթամիւրում (այժմ Գի-
նեւէտ կոչուած), Ազարակում, Բերազա-
նում, Արագածի արեւելեան փէշերին Արա-
բանի շրջանում Ափնայ, Աստուածբնակ, Քա-
սախ (Բաշ Արաբան), սորա դիմաց Քա-

նա յիշէ քո ստէ
փանոս ի քո թագ
աւորութեան

Իւր պարզութեամբ եւ բառերով յիշեցը-
նում է Կոմիտաս կաթուղիկոսի արձանո-
գրութիւնը. Հոխիսիմէի արեւելեան ավարդի
պատին։ Սա էլ մէկն է հայ գրի հին միա-
ցորդներից։

Նման եկեղեցիներ կային եւ Հայաստա-
նի այլ շաւառներում. Սինեւաց երկրումն էր
Ծիծեռնավանքը, ամենամեծ բաղրիկեան մեր
երկրում, վեց պիլոնների եւ համապա-
տասխան որմնաշէջների վերայ հաստատ-
ուած կամարներիով,* մինչդեռ Տիկորը, Քա-
սախը, եղուարդը երեք երեք պիլոնների ու-
նին միայն։ Տարաբաղդարար այդ չէնքը չենք



Պատկ. 14

սախի միւս, ձախ ափին, Ծառայիչէն, այժմ
Մոլլա Ղատմ, դուցէ նաեւ, Սամաղարվէշ,
որի եկեղեցին, թէ՛ն նորոգած իւր վերին մա-
սերով, բայց ունի նոյն շրջանին յատուկ քա-
րեր եւ քանդակներ պատերի մէջ (Պատկ. 13),
ուշադրութեան արժանի բոլորակ կիսասիւ-
ներով։ Արագածի հարաւային լանջերին Ա-
ւանում, որի մի խոյակն ունինք այստեղ ձեռ-
քի տակ (Պատկ. 14), ինչպէս եւ նոյնանուն
Աւանում, Քանաքեռից քիչ դէպի հարաւ եւ
Երեւանից դէպի արեւելք։ Խոյակի արձա-
նադրութիւնն է

Քս ած աւրհնեա
ալ ես յաւիտեա

տեսել աւ. ձամբ, խի տեղեկագրող Ե. Լալայ-
նանցն էլ մանրամասնութիւններ չէ տալիս։
Լուսի շրջանում եւս ունինք նոյն ոճի հնա-
դոյն միացորդներ, ինչպէս Բրդաձորի եւ
Պոթոռնիի աւերակները, բայց մանաւանդ

*Գուցէ եւ հիմնգ հիմնգ։ Հաւասօրէն նայն
ոմի, ձեռի եւ մեծուքեան եկեղեցի էր եւ
Դուիմի Ս. Գրիգորը, որ բացուեցաւ խաչիկ
վարդապետի պեղումներով, վերաշինուած
հիմի տեղ, Սմբատ Բագրատունու եւ Արրախաւ
Կաթուղիկոսի ժամանակ. Սեբէոս, ԺԷ. Գլ.։
Յատակագծի մնացորդը Strzygowski. Die
Armenische Baukunst. Խր. 164, պատկ. 192։

Նոսփը կամ Ածոփ կոչուած հին վայրի միանաւ, հետաքրքրական բաղիլիկան (Պատկ. 15), վերջապէս Լուսի շրջանին կից Ղազարի կողք աւանի աւերակ եկեղեցին, որ թէև պեղումներ չեն կատարուած եկեղեցու յատակապիծք եւ մանրամասնութիւնները պարզելու, բայց պատահական կերպով երևան հանուած քանդակները կասկածի տեղիք չեն թողնում, որ միջագետական-հելլենիստական աղեղեցութեան ակնյայտնի մի երևոյթ ունինք այստեղ (Պատկ. 55), որ կը տեսնենք յետոյ:

չենք,* բայց այդ ցանկի մէջ կան եկեղեցիներ, զեղարուեստական բարձր կատարելութեամբ, որ բաղիլիք ոճին չեն պատկանում: Նախ յիշենք, որ Էջմիածինը եւ զարի վերջերին զմրեթաւոր էր ամենայն հաւանականութեամբ, թէև զմրեթը փայտաշէն. ապա այս ցանկի մէջ յիշատակուած Աւանը Գանաքեռի մօտ, Արամոյնքը Կոտայքի, Նոխիսի մէջ տիպի եկեղեցիներ են, այն էլ իրարից տարբեր ձևերով: Նոխիսի մէջ ինքը շատ հեռու է այս շրջանից՝ 618 թուին շինուած. բացի զորանից կան նոյն տիպի եկեղեցիներ, որ



Պատկ. 15

Այսպիսի բաղիլիք չենքերի մեծ բաղմունքին Զ., հաւածօրէն նաև աւելի հին դարերում, ցոյց են տալիս այս ոճի նախնական եւ ուժեղ հասանքը հաստատում, որ ըստ թորամանանի հաղոյնն էր, եւ մինչև հեթանոսութեան շրջանները հասնող, իսկ ըստ Ստրաբոնիսի եկեղեցու պաշտօնական ձևեր Դ.—Զ. դարերում: Իրողութիւն համարելով բաղիլիք եկեղեցիների մեծ հասանքը մինչև Զ. դարի վերջերը, սակայն չենք կարող ասել, թէ նրանք եղել են միակ տիրապետող ոճը հայաստանում: Տարբարազգաբար, Գիրք իղթացի ցանկի բոլոր եկեղեցիներին ծանօթ

Նոխիսի մէջ աւելի հին ենք համարում, ինչպէս Աղիւսամանի տաճարն է Արագածի արևմտեան լանջին, կարծում ենք Կամարականների դործ. ապա Մմիսի Ս. Խաչը, որ Զուրիտաշիլիու նոր ուսումնասիրութեամբ Զ. դարի դործ է: Սրանց վերայ աւելանում են Օշականի ճանապարհին Թարգմանչաց վանքի աւերակները, Ջանդեղուրի Ղարաքիլիսէն Գորիսի մօտ, Կուրգանը՝ Լուսիում՝ Զորադիդի մօտ:

*Պիլիք քաղոց. եր. 151:

Ահա բաղիկի լաներից տարբեր ոճի տա-
ճարների մի ստուար խումբ, որոնք զեղար-
ուեստական բարձր կատարելության են հա-
ռած, եւ ուրեմն, դարերի նախապատմութիւն
ունին, մանաւանդ, որ մենք ցոյց պիտի

դաժ տեղեկութիւններէց դատելով, իսկ Ուր-
դայ եկեղեցին (այժմ իրանշայան կոչուած),
եթէ ձորի դմբեթաւոր հին մատուռը չէ,
գիւղից բարձր անբակնիւրի տեղում պիտի լի-
նէր: Դատուանի, հին Բաղարանի եւ Ար-



Պատկ. 16

տանք, թէ դմբեթաւոր չէնքը Ե. դարում շատ
ընտանի էր Հայաստանում: Աւելացնենք, որ
Արծաթիւ Հռիփսիմէի տիպի կամ ութ անկիւ-
նանի (octogon) մի չէնք է, հանդուցեալ
Գիւտ եպիսկոպոսի բերանացի մեղ հաղոր-

տաւաղդայ ապարանից չէնքերի մասին տե-
ղեկութիւն չունինք: Ուրեմն Թղթոց գրքի
վաւերականի ցանկով ունինք առ նուազն եր-
կու տարբեր ոճի եկեղեցիներ բարձր կա-
տարելութեամբ:



Պատկ. 17

Պաղատանքի զոյաթիւնը մատենադրական վկայութեամբ 606 թ. Հաստատելով, մենք գտանք միայն նորա ծագման ամենաուշ ժամանակը. իրաւունք ունինք ենթադրելու, որ աւելի վաղ պիտի շինուած լինի, քանի որ յիշուած է այդ թուականից աւելի վաղ վանքերի հետ: Բարերազգարար շէնքը ինքր տալիս է մեզ իւր ժամանակը որոշելու համարական րանային: Եկեղեցու նկարագրութեանց տեսանք, որ մի ձիաւոր պատկերաքանդակ կար առիւծի հետ կոռուող, վերին էլ զրուած «ՄԱՆՈՒՆԴ ԱՄԱՏՈՒՆԵԱՅ ՏԷԲ»: Հայ եկեղեցիների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, թէ հայուազիտ երևույթ չէր չիմնադրւելների պատկերները քանդակել իրենց շինած եկեղեցիների պատերի վրայ: Արազածի արեւմտեան փէշերին, Մանուկճուղ կոչուած զուգում, Հատիճոյ վանքից և Արտիկ աւանից քիչ արեւմուտք, ունինք մի հնազոյն, փոքրիկ եկեղեցի, մեր կարծիքով ոչ ուշ, քան 9. դարի վերջեր կամ է՝ սկիզբը, որի արեւմտեան դրան զլիւն ներսից, Աստուածածնի քանդակի հետ և մի ազոթոցի քանդակ (Պատկ. 16), տարազգարար, եղծուած վիճակում մեզ հասած, որ եկեղեցու շինողը պիտի լինի: Աստուածածնի քանդակի մասին պիտի խօսենք յետոյ: Մերենում ունինք կամարական իշխանների հետաքրքրական քանդակները (Պատկեր 17. նաև Արիւան, Այրարատ 155). 638 թուականից. հարեւան Վրաստանում Մցխեթի Ս. Ուսչի վերայ, Ուսթունի աւանում ունինք մի իշխանի և Աղիսկոյութի քանդակ, Աղթամարում Գաղիկ Վասպուրականցու քանդակը Ժ. դարում (Պատկ. 18), Անիում Գաղիկ Ա. Բաղրատունու, Հաղրատում Սմբատ և Գուրգէն Բաղրատունիների և այլն: Մեր տաճարի վերայ քանդակուած Մանուկ Ամատունեաց Տէրը ոչ այլ ոք է, բայց և թէ եկեղեցու չիմնադրող: Պէտք է աշխատենք դանկ նորա ժամանակը, որով դուռը կը լինինք նաև եկեղեցու շինութեան ժամանակը:

Ամատունեաց տաճարը հայ նախարարական տներին մէջ առաջիններից մէկն էր, դռն է,

Դ. և Ե. դարերում. Տրդատ մեծ քրիստոնեայի օրով Հաղարապետութեան պաշտօնին հասած. յիշում են Օտայ և Վահան Ամատունիները,* Դ. դարի կէսերին Ներսէս մեծի ժամանակ Կարէն, և Պարզեւ և սորա որդին Մանուէլ Ամատունի, Արշակ Գ.-ի ժամանակները:** Հինգերորդ դարում Հայոց Հաղարապետն էր Վահան Ամատունի, Ս. Մեսրոպի յուշարկաւորը և նորա անուան տաճար կանգնողը, ժամանակից Վարդանանց պատե-

Վահանանց ապստամբութեան ժամանակ յիշում է Վարազդատ Շապուհ ի տոհմէն Ամատունեաց, որ բաժանում է ուխտաւորն ի խմբից և նրանց մխարանութիւնը մատնում Ատրվշնասոյ մարդկանին:† Հինգերորդ դարի վերջում և Զ.-ի սկզբում Ամատունեաց նահապետն էր Մանգեն, որ ժամանակից էր Բարզէն կաթողիկոսի ժողովին՝ 505 թուին:‡ Այնուհետեւ Ամատունի իշխանի յիշատակութիւն չունինք մինչև Զ. դարի վերջերը, երբ հանդէս է դալիս Կոտիտ Ամատուն-



Պատկ. 18

րաղմին, նախարարների ղերութեան և դարձին: Սորա Հաղարապետութեան օրով գուժարունցաւ 447 թ. Շահապիւմանի ժողովը:†

եաց տէր: Մի խումբ նախարարներ և նըրանց մէջ Կոտիտ, կամենում են ապստամբուել Պարսիկներէց, բայց երկպառակութեամբ է վերջանում ինդիքը, և Մամակ Մամիկոնեանի և Ստեփանոս Սիւնիի հետ

*Ագաթանգեղոս եր. 163, 164:

**Փառստոս Բիւզանդ եր. 28, 31, 49, 81:

†Արսէն Արմենաւ. Կամոմագիրք Հայոց. եր. 59:

††Վաղար Փարպեցի եր. 120. Էջմ. Հրտ.:

‡Դիքիք քղոց. եր. 42:

Կոտայն էլ հնարանդուս է Պարոնց։ Խոս-
րով Ապրուէդը յատուկ հրովաճառելով նրանց
Դուսն է կոնչուած ևս դատաճանոթեամբ
հետզհետէ սպանել տալիս։ Կոտայն սպա-
նում են ճանապարհին, երբ նա գեսպան էր
ուղարկուած Քի Մըծունն։ Նորա մահուան
հիշող թուականը նշանակել չենք կարող,
բայց Սերէոսի պատմութեան ընթացքից դա-
տելով, պէտք է նշանակել մօտաւորապէս 600
թուին, երբ արդէն Սմբատ Բագրատունին է
սկսում դեր խաղալ իրբնւ. Վրկանայ մարդ-
պան եւ Պարոնց սպարապետ։ Կոտայն հան-
դէս դարը, ուրեմն, պէտք է նշանակել 590-
600 թ.թ.։ Պատկերաքանդակի Մանուկ Ա-
ւետուհեաց տէրք պէտք է սարէր 510-590
թուերի մէջ։

Գլխի թղթից մի ալլ վաւերական 552 թ.
թուականից՝ տալիս է շատ հաւանական հի-
մունքներ, որոշելու նորա ժամանակը։ Ներ-
սէս Բ.—ի միաբանական թղթին ստորագրում
են մի չարք իշխաններ, ոմանք իրենց տոհ-
մական, և ոմանք, տարարազարար, միայն
հայրանումով։ Դոցանից մէկն է Վասակ ի
Մանուկեանն, որին պիտի համարել տաճա-
րի հիմնադրի որդին։ Ուրիշ հանգամանքներ
ուելի ևս ճշմարտաման են զարժնում մեր
կարծիքը։ Պողոսյանքի հիւսիսային զրան
վերայ եղծուած արձանագրութեան մնա-
ցորդներից կարգապէս է Վասակը անունը,
զորտեղեան ձեռնից գտաւ իր ձին. Վասակը
անունը կրկնուած է նաև հիւսիսային պա-
տի արեւմտեան լուսամտաւ պատկեր թելի վե-
րայ. այս տեղը աննշան լինելով, դժուար է
ենթադրել, թէ շինող իշխանի անունը կամ
նորա որդու անունը լինի, հասնորէն այդ
ճարտարապետի անունն էր, ուստի և ոչ
պակաս արժէքաւոր մեզ համար։ Բայց զրան
ճակտաբարի արձանագրութեան մէջ յիշ-
ուած Սասակը չէր կարող աննշան մէկը լի-
նել. չէր կարող նաև եպիսկոպոսի անունը
լինել, որովհետև ժամանակի եպիսկոպոսը
Խոսրով էր կոչուած։ Մենք շատ և շատ հա-
ւանական ենք համարում, որ նա հինգ ներ-
սէս Բ.—ի մտքովին ժամանակից Վասակ ի
Մանուկեանն է, այսինքն տաճարի շինու-
ղի որդին։ Ի նկատի պէտք է ունենալ ևս այն
հանգամանքը, որ երկու որոտղներէից մէկը
աղեկանուոր է ևս ձեռով, միւսը հետեւակ ևս
նիզակաւոր, երկու տարբեր անձնաւորու-
թիւններ, հայր և որդի։ Այս հաւանական

ենթադրութիւններ և տուեաններ վերայ
եկեղեցու շինութեան ժամանակը նշանակում
ենք 2. դարի երկրորդ քառորդին, Մանուկ
Ամատունեացը համարելով Մանգենի որդին,
իսկ Կոտայն Վասակ ի Մանուկեանին՝ որ-
դին։ Մեր նշանակած ժամանակն էլ միան-
գամայն յարմար է զարիս այդ շրջանին. մի
այսպիսի հայկապ շինք կանգնելու համար,
ուելի խաղաղ ժամանակ էր հարկաւոր. մեր
մատնանշած ժամանակը հինգ այդ խաղա-
ղութեան տարիներն էին, Յուստինուսի և
Խոսրով Անտիշիրյանի մէջ կուսած դաշին-
քով։

Ե.

Պողոսյանքի ծագման ժամանակի խնդի-
րը մօտաւորապէս որոշելուց յետոյ, տե-
նենք ի՞նչ արժէք է ներկայացնում այն՝ հայ
արուեստի և ճարտարապետութեան պատ-
մութեան նկատմամբ։ Երկու խորի կարող
ենք բաժանել մեր զիտոգութիւնները, մէ-
կը կարգուած շինքի մարմնի, յատակադի
և զարդարանքի հետ, միւսը գմբէթի ծագ-
ման։

Ինչպէս շինքի ամրոցման, այնպէս
էլ զարդաքանդակների մէջ տեսնում ենք եր-
կու հոսանք իւրա կողքի. մի կողմից երկա-
րածից մի շինք, ներսից բարձր կոպա-
նով (եր. 8), չէրքին տարածականութեամբ
ևս կոտուրով մօտ ետանաւ բաղկիւններին,
միւս կողմից գմբէթաւ և արեւելեան պա-
տի արտաքին մասով և կամարախորշերով,
նման տեղական այլ տեսակ շինքերին, ինչ-
պէս Հոսիսիմէն և Արուծր (Պատկ. 3, 4)։
Զարդաքանդակների մէջ ևս տեսնում ենք
նոյն երկուութիւնը. մի կողմից համեմատե-
լի կամ նոյն մեր բաղկիւն շինքերի քանդակ-
ներին, որոնց ծագումը Միջագետքի և Աս-
որիքի մէջ ենք տեսնում, ինչպէս արմատենի
ծառով ևս առիճնով զաշտակաւոր, հարթա-
քանդակ պատկերազարդութիւնը հարաւային
պատի լուսամտաւ գլխին, արեւմտեան լու-
սամտաւ շուշանածաղիկը, հիւսիսային զը-
րան կանխիկ լայնատեղեւ, նոյն պատի ա-
րեւմտեան զոյգ լուսամտաների պատկերի
թուռնների շարքը պայտածեւերի մէջ՝ ճա-
կատին հաւասարակող խաչով, որ Բարսիլայի
և մեր հին աւետարանների կամարներն են
յիշեցնում, ուրեմն ևս երկու արուեստների
աղբերը։ Սորա վերայ պիտի աւելացնենք հա-

բաւային լուսամուտի վերայ սաւառնող հը-
րեշտակները, որոնք Յիսուսի՝ մեղալիտնի
մէջ՝ անդրին են բռնել, մեծ նմանութիւն են
բերում Ստարով Բ.-ի Տազ Բոստանի այրի կա-
մարների գլխին սաւառնող ոգիների հետ:
Այսպիսի սաւառնող հրեշտակներ կը տեսնենք
եւ Օձոնի վերայ: Նոյնը տեսնում ենք Մցխե-
թի Ս. Խաչ եկեղեցու դրան կամարակալ քա-
րի վերայ. այստեղ միայն հրեշտակները բո-
լորակ շրջանակի մէջ հասասարակող խաչն
ունին բռնած, իսկ Պողոսիանքում Քրիստոսի
մեղալիտնը, բոտ էութեան միեւնոյնը. խա-
չը Քրիստոսի անձի նշանակ ջրիտոնէական
արուեստի մէջ է.—Ձ. դարերում սովորական
հասկացողութիւն է:*

Արագածի հարաւային կողերին պատմա-
կան Վժռան եւ այժմեան Ուշան կոչուած գիւ-
ղից զէչ դէպի հիւսիս ունելը, Հալի Բա-
րամ գիւղի մօտ՝ մի գերեզմանական կոթող
կար, այժմ իջմածնի թանգարանը բերում, որ
մի երեսին Աստուածածնի քանդակն է
Յիսուս մանկան հետ, Աստուածածնի գլխին
սաւառնող հրեշտակը պսակ է դնում. (Պ. 31):
Անկախ սորանից Strz-ն, Տազ Բոստանի քա-
րայրի քանդակագործութիւնը աղոյւած է
համարում ասորա-եզրպտական արուեստից,
եզրպտական ոչ հին փարաւոնների, այլ սո-
րա եւ հելլենա-հռոմէականի խառնուրդից
յառաջ եկած հոսանքից, որին միանում է
եւ ասորականը: Ահա նորա խօսքերը.
Vom syro-egyptischen Kreise abhängig ist auch
Tag i Bostan, wo Chosroes II, in der Hirsh-
jagd ähnlich eingeführt ist. Vergl. Ravilson,
The Seven Great Oriental Monarchy, p.
614/5:***

Քրիստոս մօրուքաւոր՝ մեղալիտնի մէջ՝
եւ կողերից առաքելները տեսնում ենք եւ
ապօրական արուեստի մէջ. այսպէս է Լուվրի

մի անօթի գոտու վերայ, երկու դուզահե-
ռական հասկերից կազմուած բոլորակ շրջա-
նակների մէջ պատկերաւորած է մօրուքաւոր
Քրիստոսը, իսկ կողերից վեց առաքելանե-
րը, Ձ. դարի դործ:† Նոյն ժամանակի գործեր
են, եւ արուեստի եւ ոճի կատարեալ նմանու-
թեամբ նաեւ Բրիտանական թանգարանի ա-
ծաթի բուրմանները (Encensoir), Kerynia-
ից: Կողմնակի այս ցուցումները պէտք է
կարեւորագոյն ապացոյցներ ընդունուին մեր
Պողոսիանքի ժամանակի եւ հոսանքի որոշ-
ման նկատմամբ:

Բայց եւ տեսնում ենք Պողոսիանքի վի-
րայ դարդեր, որոնք կրկնուած են Հոբիւսի-
մէի, Կարսի Ալբակի եւ այլ շէնքերի վերայ,
որոնք իրանական արուեստի սասանեան շըր-
ջանն են յիշեցնում: Հէնց Մանուէլի որսոր-
դական տեսարանը սասանեան արուեստի ա-
մենատիբի մոտին էր, թողում ասել, որ
կոուր ձեւի մէջ եւս որոշ նմանութիւն է
նկատուում:

Հայ ճարտարապետութեան մէջ այս եր-
կու հոսանքների, քառանկիւնու վերայ գմբե-
թաւորի եւ երկայնաձիգ րաղիլիքների միու-
թիւնը մասնաշնչէ է Սաբգիւղիսիկին հայ ար-
ուեստին նուիրած իւր մեծ գործի մէջ, Ա-
րուսի Ս. Գրիգորը համարելով դորա հնա-
գոյն եւ փառաւորագոյն երեւոթը—in einer
Grossartigkeit, die den Vergleich mit den
mächtigen kathedralem des Abendlandes und
den Barockbauten vom Typus des Gesu im
besonderen aushält — այսպիսի հոյակապու-
թեամբ, որ կարող է համեմատուել Արեւ-
մուտքի մեծ մայր եկեղեցիների եւ Gesú
տիպի բարձր շէնքերի հետ:*

†Strzy. L'ancien Art Chrétien de Syrie.
Տախտ. XX. 2.

*Տե՛ս մեր Հաւուց Թաղի Ամենափրկիչը.
Խ. 39 եւ 49: Համեմատել A. Grabar. L'art
Byzantin. 1938. պատկ. 21, որ 400 թուա
կամի գործ է համարում:

**Strzygowski. L'ancien Art Chrétien de
Syrie. Table XII եւ XIII. Տես եւ
Baroness Ravensdale. Old and New in
Persia. The National Geographic Magazine,
Sept. 1939. p. 352. A. U. Pope. A Survey of
Persian Art. London and New York. 1938. p.
159.

*Strzygowski. Die Baukunst der Armenier.
Խ. 188: Նաեւ իւր L'ancien Art Chrétien de
Syrie, Paris, 1936, Խ. 32: Վրացի գիտնական
Ջուրիմաշվիլու պնդումները Արուսի ակնի
ուշ ժամանակի համաբնու մկատմամբ, ոչ
միայն համոզեցուցիչ չեն, այլ եւ անընդա-
մեծի համար: Այս խնդրին պիտի դառնանք
այլ առթիւ, այժմ ձեռքի տակ չունենալով
մեր չափաքաւր-իւններն ու նկատողութիւն-
ները Արուսի մկատմամբ:

Եթէ հայր ընդունել է Երկարածիդ բա-
ղիւիկաների շէնքը Միջագետքից եւ Ասորի-
քից, իսկ քառակուսու զմրեթաւորը Իրանից,
նա միայն մեքենական ընդօրինակող չէ, այլ
դարզացիւ է դրսից ընդունած տարրերը եւ
ստեղծագործել յատկապէս, երկարածիդ

նորան յայտնի չէին այդ տիպի աւելի հին
շէնքեր քան Արուճը է՝ դարում եւ Երազդա-
ւորսը իններորդ, բայց ահա Պտղաւանքը մո-
տաւորապէս մէկուկէս դար առաջ տալիս է
այդ միութեան կատարուած փաստը եւ այն
էլ այնպիսի կատարելութեամբ, որ իւր դար-



Պատկ. 19

զմրեթաւորը, որ նախակարապետ է հան-
դիսացել Թ. դարում բիզանդական զմրե-
թաւոր բաղիւիկաներին, հայ ծագումով
կայսրների ժամանակ: Տեսականապէս Ստը-
շիդովսկին ընդունում է, որ Արուճի նախա-
տիպը պէտք է ծագած լինէր Զ. դարում,

զացման նախընթաց շրջանը պիտի ունենար:
Նշանակալից տարրերութիւն կայ, սակայն,
Երկուսի մէջ. մինչդեռ Արուճի մէջ տեղա-
կան հայկական արուեստը յաղթահարել է
բաղիւիկային, պահպանելով միայն երկա-
րութիւնը, Պտղաւանքի մէջ դեռ եւս զօրեղ

է միջազեմական աւանդութիւնը իւր յարաբանքներով:

Պտղալմանքի ոճով եւ ձեւով մի ուրիշ, նոյնչափ, դուցէ եւ աւելի չին եկեղեցի գլխաւորում էր Աբարանի Մատալիչէն, այժմ Մոլլայ Ղասթմ, գերդում, Գնթունեաց շէնք: Գնթունիք, ինչպէս եւ Ամատունիք, պատկանում էին չին նախարարական տներին. Գնթունեաց կալուածներն ընկնում էին Աբաղածի արեւելեան լանջերին, ներկայ Աբարանի շրջանում, սահմանակից Ամատունիներին, որոնց կեդրոնները Օշականը եւ Պտղալմանքն էր, ինչպէս տեսանք: Գնթունեաց կեդրոնը պիտի լինէր Քասախը (այժմ Բաշ Ա-

գերեղմանական մի կոթողի մնացորդ (Պատկեր 19), բայց եւ Պտղալմանքի տիպի մի եկեղեցի, որ ժամանակակից էր, դուցէ, մի քիչ էլ չին նորանից: Սա աւելի փոքր է քան Պտղալմանքը, բայց չիւսիսային պատից դատելով, ճիշդ նոյն կաղմութիւնն ունէր ներսից, ինչպէս Պտղալմանքը. միւս մասերը այս հետաքրքրական շէնքի, տարարադարար, քանդակ են նորոգութեան ժամանակ: Այլ դասի որմայեցի երեսին խոշոր եւ գեղեցիկ երկաթադիր տառերով գրուած է «ԳՐԻԳՈՐ ԳՆԹՈՒՆԵԱՅ ՏԷՆԻ»: Նոյնանուն Գնթունի իշխան յիշուած է Ժ. դարում, Հասանի եղբայրը, որ Առոտ Երկաթի հակառակորդն էր,



Պատկ. 20

բարան կոչուած), իւր եկկու մեծ եւ փոքր բաղնիք, ամենահին եկեղեցիներով. այստեղ դուռն է Տրդատի յունարէն արձանագրութիւնը Գնթունեաց յիշատակութեամբ, որ փոխադրուեցաւ էլմիսանի Թանգարանը. ներսից սահմանները մէջն էր չին Եղիպատրուշը եւ ներկայ Տաճըլուան, որի տներից մի քանիսը շինուած են ամենահին պալատի կամ բերդի շէնքի փերայ, նաեւ Ժ. եւ յետագայ դարերի յուշարձանների կարեւոր մնացորդներով: Սրանից քիչ հարաւ, մօտաւորապէս երեք մղոն հեռավորութեամբ, գտնուած է չին Մատալիչէնը (այժմ Մոլլայ Ղասթմ կոչուած), ուր բաղնիք մի եկեղեցի կար, խոյակները Քասախի կամ Տիկորի նման եւ չին

բայց այս Գրիգորը եկեղեցու շինողը պիտի լինի: Եկեղեցին չիւսիսային պատի արտաքին որմայեցիների պահպանութեամբ, նման Երեւոյքի եւ Գառնիի չիւսիսային պատերի որմայեցիներին, ապացոյցն է տալիս, որ նա 2.-6. դարի դուռն է եւ ոչ Ժ. դարի: Մերունիների ասելով գմբեթաւոր էր:

Յիշատակելի են նաեւ Աստուածընկալի եւ յատկապէս Արնայ գիւղի երկու փոքրիկ բաղնիքները, որոնց հարաւային դուռները ճակատաքարերը (Պատկ. 20) նոյն քանդակներն ունին, ինչ որ եւ Քասախը, նոյն նաեւ խոյակով, որ նմանութիւն է բերում

*Յովհ. Կաթուղիկոս. եր. 179-180:

Քուրդի Աղբուղիի Tag i Bostan-ի շէնքի խոյակին,* բնականաբար, առանց Անաշխ գիցուհու պատկերաբանդակին (Պատկ. 21), գիցուհու փոխարէն խաչաքանդակ: Այստեղ կայ եւ մի գերեզմանական կոթող վատ պահուած վիճակում, բայց բաղիլիք եկեղեցիների հետ կապուած կոթողների նման, որոնց մասին խօսք կը լինի այս աշխատութեան երկրորդ մասում: Մի եկեղեցի եւս կար Ղարաբիլիսէ գիւղում, գէպի Լենինական տանող խճուղու վերայ, որ քանդուած եւ տեղը նոր եկեղեցի է շինուած: այստեղ էր Հասան Գեթուհու արարական չրջանի ժ.—ԺԱ. դարերին յատուկ օրօրոցածու գերեզմանաբար, որ Էջմիածնի թանգարան տեղափոխեցինք, նախապէս ձգուած լինելով գիւղացի մի ննջեցեալի վերայ: Ասել չենք կարող թէ եկեղեցին ո՞ր դարի եւ ի՞նչ տիպի գործ էր:



Պատկ. 21

2.

Բայց Պողոսյանցով պարզում է եւ մի այլ խնդիր, թէ զարդաման նոյն գործողութիւնն է կատարուել նաեւ անջատ մոյթների վերայ հաստատուած զմբխուոր երկարաձիգի նկատմամբ: Թորամանեանը Տիկուրին նուիրած իւր աշխատութեան մէջ այն միտքն է արժարժում, թէ այդ կարգին պատկանող մեր մի քանի շէնքերը իրենց նախնական

այլ ինչպէս Պողոսյանցի վերայ տեսաք, երկու գեղարուեստական հոսանքների փոխադարձ ազդեցութեան եւ միութեան հետեւանք, որ վերջնում է եռանդաւ լաղիլիկաների զմբխուորմամբ եւ տեղական — իրանական հոսանքի յաղթապարտութեամբ: Այդ գործողութիւնը կատարում է երկու գծով. եռանդաւ լաղիլիկայից Օձուն, Մայիսինէ, Բաղրեւանդի Ս. Յովհաննէս, Մերն. իսկ միանդաւ լաղիլիկայից Ծառայիւէն, Պողոսյանք, Արուճ, Երազգաւորս: Վերջինը իրեն Բաղրատունեաց վերածնութեան չրջանի գործ է:

*Sarre. Die Kunst des alten Persien. 1922. h. u. F. Sarre u. Herzfeld. Iranische Felsreliefs. p. 211. Պատկ. 110:

Օձունի տաճարը իւր անջատ մոյթերի վերայ հաստատուած դմբեթով եւ յատակադծով միանգամայն նման է մեր Գայրանէին եւ Մրենին, բայց մի մեծ տարբերութեամբ, որ Գայրանէում բացի մոյթերից եւ երկարածիդ ուղղութիւնից, գրեթէ, ոչինչ չէ մնացել բաղիլիք եկեղեցիներէց. իւր օրնամենտացիայով սասանեան արուեստն է յիշեցնում, ընդհանուր առմամբ նոյնը կարող ենք ասել Մրենի նկատմամբ.* ուրեմն, այստեղ եւս տեղական իրանական արուեստը յաղթող է հանդիսացել, ինչպէս Արուծի նկատմամբ տեւանք Պողոսյանքի համեմատութեամբ: Դորա հտկառակ Օձունում պահուած է բաղիլիք եկեղեցու աղերսը շատ մեծ չափով,

պատկերաքանդակները յուսամուտների շրջանակների մէջ: Այս եկեղեցին մենք համարում ենք աւելի հին, քան մեծ տաճարը եւ ճղանդակատունը կոչուած յուշարձանը, որ գերեզմանական կոթող է փառաւոր, եւ ներկայ գիւղացիների կողմից այդպէս կոչուած, դանդաղ աշտեղից կախած լինելու պատճառով. նոքա իրենց բարով, կառուցուած հետու շին միմեանցից: Պայտածեւ կամարներ եւ աղեղներ մենք տեսնում ենք եւ ուրիշ տեղերում, ինչպէս Աշտարակի բաղիլիկան է, Արագածի Աւանը կամ Թեղենիաց ձորում Քիրաշլուի մի նաւանի բաղիլիկայի փախիղն է եւ նոյնը Բայրուրում, որ դռնում է



Պատկ. 22

Իււթի ընտրութեան, սրահների պահպանութեան, պատկերազարդութեան եւ օրնամենտացիայի մէջ, որ տարաբաղդաբար ջարդուած եւ փշաքած ձեւով հասել է մեզ:

Օձունում երեք չէնքեր կան, որ ժողովրդաբարձր իրար լրացնում են նրանց հնութիւնը ճշգիւլու համար: Դոցանից առաջինը բերդի եկեղեցին է, թէ եւ նորոգութեան ենթարկուած, բայց եւ այնպիսի արխայիկ ձեւերով, որ խորին հնութիւն են մատնանշում: Այդ նշաններն են նորա իսկական պայտածեւ կամարները եւ քիչ չափով պահուած

Գառնիից ոչ հետու, Ազատ գետի ձախ վտակի վերայ, բայց ոչ մի տեղ այնպէս շէտուած, ինչպէս Փասախն է, որի հարաւային նաւը անաղարտ է, ինչպէս եւ հիւսիսային պատին կից արեւելեան սենեակը: Այսպէս է նաեւ Լոռիի հիւսիսային սահմաններում Սաղախլու գետի միջին հովտում Բրդաձոր եւ Խոփոռնի գիւղերից դէպի հիւսիս արեւելք գտնուած Ծոփքը կամ Աձոփը մի նաւանի բաղիլիկան (Պատկ. 15) եւ արեւմտեան կողմի մարթէֆս — զաւիթը, բոլորն էլ պայտածեւ կամարներով, որոնց նման է այս կողմից եւ Օձունի բերդի եկեղեցին: Ծոփքի ամենահին բաղիլիկաներից մէկը լինելու ապացոյցն է

*Strz. Die Baukunst. պատկ. 182. 507.

ուշ միայն խաղողի որթը հարաւային պա-
սին, որ կարող է իւր խկական տեղում չլի-
նել, այլ շէնքի ալլ մասից ալլտեղ ամբա-
ցրած (Պատկ. 22), այլ յատկապէս նորա կի-
սախտակներէ հալուադիւտ բուսական և
կենդանական քանդակները, արժանեաւ եր-
կու կողմից մի մի կշիռիկ և նրանց յետեւից
մի մի տարած. արժանեաւ երկու կողմից
(Պատկ. 23) եղջերուները համեմատելի և
հաստիկ արեւմտեան դրան քանդակի (Պատ-

կ. 24) հեղինարական մասիւ է, որ հանդիպում
ենք նոյն հասանքին պատկանող շէնքերի վե-
րայ: Կենդանական մի խոյակ էլ ունէինք
Քասախում փոքր եկեղեցու մաս, մեծից
տարբեր, զի զի արեւմտեան կողմը, որ փո-
խադրել ենք էջմիածնի թանգարանը, մի ե-
րեսին մարդկային մի ֆիգուր չան գլխով:
Բերդի եկեղեցին համեմատաբար աւելի
հին համարելով Օձունի երեք շէնքերի մէջ,



Պատկ. 23

կեր 7) հետ, դարձելի ալիքաձև արժանեաւ-
կի դարդը Քասախի, Տիկորի, և բաղիլիկա-
ների մասնանշած խոյակներին (օր. Պատկ.
63): Միւս արեւմտեան կիսախոյակը (Պատկ.
24) կեղբունում հասարակող խաշի տակ
մի փոքր ծառ. հորիզոնական թևերի վե-
րայ մի մի թուռն, աղանի, տակը մի փոքր
և կողքերից համեմատաբար աւելի մեծ ծառ,
որ ձիթնու նմանութիւն է բերում: Վերեւի
դարձելի քանդակը՝ ալիքաձև արժանեաւկի

պատկերադրութեան կողմից սորա և յու-
շարձանի մէջ արուեստի որոշ նմանութիւն
է նկատում, իսկ յուշարձանի (Պատկ. 25-
25ա) և տաճարի (Պատկ. 26-27) ծագման
նկատմամբ կասկած չիսկ չէ կարող իրենց
նիւթի և կառուցութեան նկատմամբ: Ի-
րենց կամբարակ քարերով և արուեստով
նրանք պատկանում են Տիկորի և Երեւոյի
շրջանին, որոնք Ե-2. դարերի զործեր են,

գեղարուեստական նոյն հոսանքի արդիւնք, նիւթի նմանութեան հետ նաեւ իրենց շատ ձեւերով եւ քանդակներով: Նմանութեան առանձին ձեւերից մէկն էր հարաւ արեւմտեան եւ հիւսիսային սրահները, որոնց հետքերը միայն ունինք Քասախի, Երերոյքի, Ծառայէշէնի (Մուլլա Ղաւրմ) եւ Գառնիի տաճարների վերայ, իսկ Օձունում աւելի լրիւ մնացորդներով (Պատկ. 26, 27): Առաջին պատկերը արեւմտեան տեսարանն է, իսկ երկրորդը հարաւային ամբողջական տեսարան. տես Strzygowski-ի գործի մէջ եւս:՝ Սրահի

ինչպէս տեսնել կարող ենք արձաթի ածաթ-
ների վերայ: * Պատուանդանի վերին դար-
նէկի զարդը ուղղահայեց զծերի և խորա-
փխտների շարքով կրկնուած են կողրի մնա-
ցորդ քանդակների մէջ, որ յետոյ կը տես-
նենք, ոչ աւելի ուշ քան Զ. դարը: Աւելի ներ-

դրան ճակատաքարի վերայ, որ Ե. զարի
գործ է համարուած: * Իսկ No. 51-ի նման
ունինք Եգիպտոսում, բայց աւելի Ասորի-
քում, ըստ Strzygowski-ի V/VI դարի գործ: **

* Smirnov Bostochnoe Serebro Taf. CXX.
St. Peters.—Orbeli et Trever. Sasanidsky
Metall. Moskva—Leningrad. 1935. 51. տես եւ
այստեղ Պատկ. 53, 57, 59:

*Deir el Benat—ը գտնուում է Հալեպի և
Ամսիսի մէջ.

**Die Koptische Kunst. 189: 8792.
Եգիպտոսի համար Crum. Die Grabstelle, 8633,
pl. X.

Ամենից հետաքրքրականը չորրորդ երեսն է (Պատկեր 48), ինչպէս Օձունի յուշարձանի վերայ տեսանք, քառանկիւնիներէ մէջ դժագրական, կենդանական եւ մարդկային քանդակներով եւ բաղիւրիկ ոճին յատուկ ձեւի խաչաքանդակներով: Ներքեւից դէպի վեր առաջին երկու քառանկիւնիները խաչառ փչացած են, երրորդի մէջ հաւասարակող խաչ է, թեւերի ծայրերին ներսի կողմից մի մի դնդակ, որ երեսան են դալիս Եւ-Ջ. դարերի խաչերի վերայ, որ առիթ կ'ունեն-



Պատկ. 53

նանք բացատրելու: Անկիւններից մի մի կոթաւոր ականթ, որ յաճախ պիտի տեսնենք գերեզմանական ուրիշ կոթողների վերայ: Հինգերորդը քառանկիւնու մէջ երկրաչափա-

կան, եռագիծ մի հիւսուածք է, կրկնուած եւ տասներորդ քառակուսու մէջ, որոնց ձեւը կը տեսնենք Թալինին նուիրուած դիւի մէջ: (Պատկ. 78 եւ 81): Վեցերորդ մի կենդանի է, ձիու նմանութիւն բերող, մէջքի կողմից երեք բոյսեր (ծառ, ծաղիկ): յամենայն դէպս նման երեւոյթ ուրիշ կենդանիների հետ յատուկ է սասանեան կամ նորա աղդեցութեան ննթակայ մնացորդների վերայ: *Յօթներորդը երկու Փիղուր, այլ և կին, բռնած խաչադուլի ձողից, որպիսին եւ Օձունի վերայ տեսանք, հաւանօրէն հանգուցեալ ամուսինները: Տասնութ կերպորդը Ծնունդը, շատ աղօտ, քարայրը ներկայացրած է չորս պայտածեւ կամարների շարքով: Կտրին մի Փիղուր՝ փչացած: Տասնեւչորսերորդը այլ ձեւի խաչ, փչացած: Մնացածը կոտորւած է. դժուար է ասել, թէ որքան բարձր էր, հաւանօրէն, ոչ շատ: Այս երեսին եւս, պատուանդանի վերայ հաւասարակող եւ կոթաւոր մի խաչ կայ, երկգիծ բոլորակ շրջանակի մէջ առնուած:

Բայց եկեղեցու եւ տեղի հնութեան յայտարար է եւ մի ուրիշ մնացորդ, հաւանական ենք համարուած գերեզմանական մի այլ ձեւի կոթողի մնացորդ, անջատ սիւնի մի բնկոր խոյակով վերջացած, բայց խոյակի վերան էլ եղել է մի բան, վերին մասի փորուածքից դատելով, դժուար կուհելի, թէ ի՞նչ էր այն, խաչ արդեօ՞ք: Կոթողների ձեւի եւ նրանց վերջաւորութեան մասին, կը խօսինք յետոյ, այստեղ մեզ հետաքրքրում են առ այժմ նրանց քանդակները, որ երեւում են նաեւ ասորական՝ Եւ-Ջ. դարի քանդակագործութեան մէջ, այսինքն վեցթեւեան խաչեր բոլորակ շրջանակի մէջ, ** նաեւ արմաւենիկի ոլորապտոյտը եւ շուշանածաղիկը, ինչպէս Տիկորի եկեղեցու եւ Օձունի կոթողի վերայ:

*Sbu Pope, 204, 208, 232 պատկերները:

**Strzygowski. L'ancien Art Chrétien, Paris, 1936. p. 87-88:



Բրդաձորից ոչ հեռու, նոյն հովտի մէջ, փոքր ինչ գէպի հիւսիս, Խոթոռնի աւանն է, որ բառ Վարդանի Զաքարեանց նախաձայրենիքն էր. նրանք աշտեղ հաստատուած պիտի լինին ժԱ. դարում. մենք ունինք աշտեղ նրանցից ժԳ. դարի արձանագրական յիշատակներ, ինչպէս Զաքարիա մեծի որդի Շահնաշինը անտառում, որ բանասիրութեան դեռ հաւաքում է: Բայց Զաքարեանների տիրապետութիւնից էլ շատ առաջ՝ աշտեղ եղել է ստեղծագործական եւ մշակոյթային կեանք: Փոքրիկ մի նաւանի բաղիթիկ եկեղեցի գտնուում է Խոթոռնի գիւղում՝ բլրի վերայ, որ յիշեցինք առաջ, ուր Վրացի իշխան Մելիքիւնների բնակարանն էր, յետոյ պնտած մեծահարուստ Արամեան

խաչ է, որոնց նման խորաքանդակներով, այլ եւս է. դարից սկսած դորձածական շէն հայ քանդակագործութեան մէջ: Եկեղեցու արձանագրութիւններն ու առանձնաշատուկ ուսումնասիրութիւնը Զաքարեանց շրջանի յիշատակներով, թողնում ենք այլ առթիւ, բայց ներկայիս տալիս ենք շին եկեղեցու քանդակներից մի քանի բեկորներ, որոնք կասկածի տեղիք չեն թողնում, թէ նա մէկն է եղել Օձունի շրջանի եւ նորա գերեզմանական յուշարձանի շինութեան ժամանակից: Ահա ձեզ ալիքածեւ արձանիկի քանդակը, (Պատկ. 50), որ տեսանք Բրդաձորի կոթողի, եւ նոյնն ունինք Ե. դարի Տիկորի արեւմտեան զբան ճակատաքարի վերայ: Երկրորդ քանդակը (Պատկ. 51) տեսանք նոյն-



Պատկ. 54

նի կողմից, իսկ այժմ պետականացած: Այդ եկեղեցու մօտ է այն գերեզմանական կոթողը, որ յիշեցինք առաջ:

Բայց եղել է մի շատ աւելի փառահեղ տաճար, աւերակների աղնիւ մնացորդներից դատելով, որի տեղը շինուած է ժԱ. դարում այստեղ ցուցադրուած շէնքը (Պատկ. 49). սորա պատերի մէջ դորձագրուած են շատ քանդակներ, հնից մնացած, ներսն էլ այժմ հուսալուծ են քանդակների բեկորներ, որոնցից մէկը խորաքանդակ, պսակի մէջ առնուած մի գեղեցիկ, հաւասարակող

պէս Բրդաձորի յուշարձանի պատուանդանի վերայ. նման մոտիւր Strz. Ճաղումով ասորական է համարուած Եւ-Ձ. դարերի դորձ: Չորրորդը (Պատկեր 52) խաչի քանդակը, ճակատի սասանեան հասկածեւ դարդի հետ, ամենասիրտ առնչութիւն ունին քանդակման եղանակի եւ մոտիւնների կողմից Բրդաձորի, Օձունի եւ Կող-

*Die Koptische Kunst պատկ. 189: 8792: Համեմատել և Crum. Die Grabstelle 8633, pl. X.

րի հետ. վերլինի մասին կը խօսինք հետեւեալ պրակտի: Կեդրոնական խաչի պատկերները տեսնում ենք սասանեան ամենահին դրամների վերայ:՝ Ահա մի այլ բեկոր գերեզմանական կոթողի, եռաստիճանի եւ ծակոտէջն պատումը ամփի վերայ ձողաքարի խաչը հասարակող, բոլորակ պսակի մէջ առնուած, պսակի բոլորակի դարդի եռանկիւնածեւերի շարքը, ինչպէս եւ ամբողջ շրջանակը, տեսնենք պիտի եւ Կողբի քանդակների մէջ, որ յետագայում այլեւ չի կրկնուած հայ քանդակագործութեան մէջ (Պատկ. 53): Արեւելեան լուսամուտի գլխին դրուած քանդակը, մի իշխանի եւ եպիսկոպոսի, ձեռքներին կեղեցու մողելը բռնած, կասկածելի ենք համարում, որպէս հին կեղեցու մաս, եւ հասանական ներկայ չենք հետ կապուած (Պատկ. 54):

Պէտք է յիշենք նաեւ մի մոտիկ եւս, ձախ աւանդատան պատի մէջ զետեղած, Ամենակայր աթոռի վերայ նստած, որ տարաքաղ-դարար լուսանկարել չկարողացանք, տեղի նկարներն եւ անյայտարութեան պատճառով, որ իւր նմաններէ մէջ հնազոյնը պիտի լինի, եթէ Օմուրի արեւելեան լուսամուտի գլխի Յիսուսի քանդակը Ամենակայ չէ:

Ե.

Նախնթաց պրակի մէջ յիշենք Կողբի աւերակների մասին: Նախ ճշդենք տեղը. այս վայրը չպէտք է շփոթել Արշարունաց դատարի աղահանքերին կից նոյնանուն հին աւանի՝ Եղնիկ Կողբացու հայրենիքի հետ. սա դրուում է Զորագետի աջ կողմը, Ղալախ եւ Լոռի գաւառների սահմանագծին մօտ, մօտաւորապէս Արտաշայի շրջանում, հնում Կողբափոր կոչուած: Այդ երկրամասը հարուստ է հին եկեղեցիների մնացորդներով, բայց գլխի հիւսիս-արեւելեան կողմը, գերկացիներից մէկը իրեն պատկանողի վերայ կամենալով կալ շինել, փորելիս երեւան է գալիս քանդակների մի բազմու-

թիւն կեղեցու պատերի հետ: Հայաստանի կառավարութիւնն իսկույն արդելում է շարունակել, իբր հնութեան վայր, ապաղային թողնելով պեղումներ կատարել մասնադէպներէ ձեռքով: Ուրեմն, կեղեցու ձեւի մասին խօսել չենք կարող, թէ եւ նշխարներից դատելով հնագոյն չենքերից մէկը պիտի լինի, արտաքոյ կարգի հետաքրքրական, երեւան հանուած փշաւքների համեմատ:

Նախ յիշենք, որ այստեղ եւս կայ դերեզմանական կոթողի մի մնացորդ, ձեւով նման կեդրոնական հայաստանի, յատկապէս Արագածի շուրջը երեւան կիւմ կոթողներին, որոնց մասին երկար պիտի խօսենք հետեւեալ պրակների մէջ: Այս նշխարների փոքրիկ մնացորդներն իսկ բաւական են մտնանշէլու, թէ այստեղ եղել է մի չէնք սասանեան-միջագետական եւ թիւղանդական նախնական շրջանի հետ կապուած, ինչպէս եւ Շուշի, Բրդաձորի եւ խոտոնի մնացորդների, բայց նաեւ կեդրոնական հայաստանի գերեզմանական կոթողների, իրենց շատ մոտիկներով (Պատկ. 55):

Նախ քանենք (Պատկ. 56) աջից ձախ ա. բ. գ. բեկորները, որոնք թւում են գերեզմանական կոթողներ. դռանից ա-ի ներքեւի մասից վեր՝ ոլորապտոյտ որթ է, ողկոյցի եւ տերեւի շարքով. որթի վերայ կանգնած է մի մարդ, ձախ ձեռքով ձողաբարձ լաշ բռնած, որ հաստատուած է վարդեակի մէջ: Վերեւի տարածութիւնը կտրատուած է շեղակի գծերով քառանկիւնիներէ, իսկ ճակատին սասանեան հասկա-ձեւ դարդ, որ Բրդաձորի եւ խոտոնի քանդակների մէջ եւս տեսանք: Մօտաւոր նմանութեամբ մի քանդակ ունինք Լիբատաւի-քի վերայ՝ արեւելեան Շիրակում, որ ա-մենաուշը. դարբ սկզբների չէնք է. այդ քանդակը ըստ Ստրիլովսկու մի հին չենքի մնացորդ է,* որ դորածդրուած է այստեղ իբր դրան վերին կողք, սակ է, թէ աւելի հին քան է. դարբ. կողմ-նակի մի ապացոյց հնութեան: Ուշադրու-

*Friedrich Sarre. Die Kunst des alten Persien. 1923. Taf. 142. No. 4 դրամը:

*Die Baukunst. 406.

թեան արժանի է մարդու զգեստը, որ քրդանց ընկերը գտնողարուն չախայ է, իսկ տակից երկար բաձկուն, նեղ անդրադարձիկ և կռչիկներ հագած: Խաղողի կտի սղկոյգները սյուրապոսյա որթի վերայ, նմանութիւն Գառնիի Տրդատայ Թախտի հարթաբանդակ նման դարդի հետ, ինչպէս իրաւամբ նկատել է Սարգիսովսկին:⁸

զլիւից, միսով սուրբ դէպի պարանոցը մեկնել: Բտահակը ծալապատիկ (կապուած է⁹) գրուած է անկիւնի սեղանի վերայ, որ բունով հաստատուած է պատուանդանի մէջ: Արբաշամի յետեւից կախուած է խոյր, վերելի անկիւնից. Տիրոջ աջը օրհնում է, երկինք ձեռացնող կամարի տակից: Գորանից բարձր մի սիրամարդ կողացաւրում է մի ինչ



Պատկ. 55

երկրորդ բեկորը նոյնպէս զերեքմանական կոթողի մաս է, իսկ քանդակը Արբաշամի գոհարերութիւնը, որ մենք պիտի տեսնենք Թալինի և Աղիւսամանի յուշարձանների վերայ ևս, միայն այնուհետք տարբեր պատուարութեամբ և աւելի պարզ բովանդակութեամբ: Պատկերի միջին ֆիգուրը, որ Արբաշամն է, մի ձեռքով բռնել է Բտահակի

որ բռն, որ փշացած է, հաւանաբէն խաղողի ողկոյց: Այս բոլորն առնուած է քառանկիւնի չբջանակի մէջ, Օձունի և Բրդաձորի նրման: Աջը որպէս Աստուծոյ ներկայութեան նշան տեսնում ենք նաև Ռաւեննայի Ս. Վիտալիոսի մոլայիկների մէջ, որպիսին Արէլի և Մելքիսեղի գոհարերութիւնն է:

Երրորդը պահել է միայն մի խաչաքանդակ երկաստիճան պատուանդանի վերայ հաստատուած, որ պէտք է զիտել ի հակա-

⁸Die Baukunst. 406:

ոսկէն: Պատուանդանի մօտ կոթի երկու կողմից, չըջնակին կպած են երկու ողկոյզներ, երկու հատ էլ վերին թևի անկիւններից կախուած, որոնք կտրատուած են շեղակի դծերով, ինչպէս ալ բեկորի վերայ տեսանք: Ներքեւի թևի անկիւններից բարձրացել են մի մի արմաւենիկ, նման խոփոնիկ խաչի եւ սասանեան Ե. դարի դրամների արմաւենիկներին (տես Դ. Գլ. պատկ. 52): Պատուանդանի տակ նկատուում է զարդի մի փոքրիկ մաս, որ տեսանք Բրդաձորի եւ խոփոնիկի մէջ եւս, նաեւ խաղողի ողկոյզի կտրատումը շեղակի դծերով: Համեմատելի է կոպտական նման երեւոյթի հետ, որ ըստ Strz-ի ասորական աղբիւր ունի եւ Ե.—Ձ. դարերի դործ է:*

նստած է Աստուածամայրը՝ Յիսուս գրկին, երկուսի դէմքերն էլ փշացած: Յիսուս ձախով աւետարան է բռնած, իսկ աջով խաչակնքում է. Մարիամ երկու ձեռքով դըրկել է որդուն, բայց ձեռքերն ոչ իրար կպած, այլ աջը փորի վերայ դրած, իսկ ձախը ոտքի, որ չի երևում, ծածկուած է մօր վերնազգեստի տակ: Մարիամ նստած է աթոռի վերայ, ոտքերի տակ, անշուշտ, պատուանդան կար, բայց կտրուած է: Որքան եւս պատկերաքանդակը փոքր է, բայց որոշ են հագուստների ձևերն ու ծալքերի մանրամասնութիւնները, որ յատուկ են միջագետական-ասորական արուեստին: Աթոռի երկու կողքերից վեր եւ բարձրացած երկու գեղեցիկ արմաւենիկներ, որի լաւագոյն եւ



գ.

բ.

ա.

Պատկ. 56

Ձևի մասին քիչ յետոյ:

Արուեստի աշնուութեան եւ նուրբ քանդակի մասին ժամանաւոր հելլենիստական ազդեցութեան, պարզ ապացոյցներ ունինք Դ. եւ Ե. բեկորներով (Պատկ. 57). առաջինը աջից ձախ անշուշտ, մի կոթողի պատուանդան է, բունը տարբեր ձեւակերպութեամբ, քան սովորական է, այսինքն ոչ քառանկիւնի, այլ բոլորաձեւ, որ հելլենականութեան աղբիւր է մատնանշում, ինչպէս եւ քանդակակերպն առ հասարակ: Պատուանդանի կեդրոնում

պարզ օրինակը կրկնուած է մի խոյակի վերայ (Պատկ. 59): Մարիամի գլխի աջ կողմից նկատուում է մի բոլորակ անիւ, որ յաւիտեականութեան նշանակն է, իսկ խոյակի զարնէղի զարդը մեղ յաճախ հանդիպած եւ հանդիպելիք հասկածեւ զարդ է, ինչպէս յիշել ենք, սասանեան արուեստին եւս յատուկ: Նոյն պատկերի մէջ եղած Ե. բեկորը նոյնպէս պատուանդանի կտոր պէտք է լինի, վերեւի փոսն ի նկատի ունենալով, երեսի քանդակները բուսական եւ ճակատը երեք հաւասարակող խաչեր, զորք դծերի չըջնակի մէջ առնուած, նման Օձունի, Բրդաձորի, խոփոնիկի եւ Հայաստանի բաղնիքի եկեղեցիներ-

*Strz. Die Koptische Kunst. Պատկ. 189, 8792:

բի վերայի քանդակներին, որ յաճախ պիտի տեսնենք յետոյ եւս: Իսկ զ քանդակը պարզ գերեզմանական կաթոցի վերին մասն է, խաչարձան, կոթի հաստատուած շրջանակի մէջ: Վարդեակի վերայ շրջանակի զարդը հասկածաւ, իսկ վերեւի մասը վերջացած հաստարակոյ խաչով՝ պսակի մէջ տնտուած: վերեւից եւ հորիզոնական թևերից մի մի ողկույզ կախուած՝ երեսները շեղակի դնելով կարատուած, ինչպէս առաջ էլ տեսանք: Խաչարձանի այս ձևը, որ յետոյ նման յուշարձանների համար ընդհանուր է դառնում, հայտնաբերում մէջ շատ տարածուած եւ բարձր զարդացման ու պէսպիսութեան հասած մի երեսայթ է յետագայ դա-

ւե յետագայ շրջանների գերեզմանական կոթողների վերայ: Առաջինը, որ տեսնուեցին կերպով խոյակ է, շէնքի մաս (Պատկ. 58), երկու երեսի պատկերն ունինք միայն, մէկը պալմիտների մէջ՝ շուշանածաղիկ, միւսը նոյն ականթիների կամ պալմիտների մէջ՝ հաստարակոյ խաչ, պորտուս բամաշկայ ծաղիկը, սասանեան եւ մեր այս շրջանի արուեստի մէջ յաճախ կրկնուած, ինչպէս եւ վերեւի զարնէղի հասկածաւ զարդը, համեմատելի Կայրէի թանգարանի 100. 7347 խոյակի հետ, շուշանածաղիկի եւ ականթի ձևի եւ քանդակման կողմից: Շուշանածաղիկը եւ կոթուսը խաչը քիչ տարբեր ձևակերպութեամբ նաեւ աջից ը. խոյակի (Պատկ.



զ.

ե.

դ.

Պատկ. 57

բերում, որպէս հետևանք հայ եկեղեցու դաստարանական սրբ ուղղութեան, եւ հակառակ պատկերապաշտութեան՝ խաչի պաշտաման տուած արտաքին կարգի նշանակութեան: 6

Բայց արտաքին կարգի հետաքրքրական են եւ բնորոշ արուեստի տեսակետով է. (Պատկ. 58, 59) ը. ք. մ. բեկորները իրենց ձևերով եւ քանդակներով, որոնք միջագետական-սասանեան արուեստի հնագոյն մնացորդներ են մեկանում, հելլենական շնչով եւ չեն կրկնում հայ ճարտարապետութեան մէջ

58) վերայ: Շուշանածաղիկը իւր տերևներով նաեւ Ղարաջարի կոթոցի վերայ, Արաղածի հարուային փէշերին (Պատկ. 60): Իններորդի տեսանկիւ երեսները տեսման խորքանդակն է, տարաբաղադար շատ եղծուած վիճակում: Տասներորդ բեկորը կոթոցի պատուանդան է, հաւանորէն, որի բունը կլոր էր, վերեւի փոքրիկ մնացորդից դատելով: Իսկ ձևը երկու քառանկիւնների իրար վերայ եւ նրանց զարդերը, պորտուսը վարդակը, հակադիր եռանկիւնների շրջանակը ալիքաձև զարդերը, եւ ուղղահայաց զժաղարկերը, նոյն հոսանքն են մասնաճիւղում: Այս խոյակները իրենց ձևով յիշեցնում են Բրաճուրիներ, բիւզանդական

* Տես մեր «Հայոց Թաղի Ամենափայլիկը». Երևու. 1937. 41, 51 եւ շար.:

խոյակները նախատիպարները (Պատկ. 61, 62, 63) : խոյակների այս տիպի առաջինը, ինչպես և Հայաստանի մէջ հնութիւնը և որոշ նմանութիւնները բնական-նենք, դուցէ և հայկական, քանի որ Ասորի-քի, Եգիպտոսի, Ինչպէս և Հայաստանի մէջ նոյն գեղարուեստական հոսանքն է նկատե-



Ժ.

Ք.

Բ.

Պատկ. 58

դականի հետ՝ հայե բնականական արուեստ-ի : Մեր այս խոյակները համեմատելի են ների փոխադարձ յարաբերութեան շօշափելի



Է.

Պատկ. 59

ապացոյցներ է տալիս, զօրացնելու Ստրզի-գովսկու կարծիքը, թէ նրանք ծագումով, դու-ցէ, ասորա-եգիպտական լինին, կ'աւելացը-

*Strzygowski. Die Koptische Kunst. Խր.

69.

Բավիտի խոյանների հետ, որ Crum-ը բեր-
դանդական է համարում, իսկ Strzygowski-ն
ծագումով աւելի հին Գ.-ն. դարերի, համե-
մատելի յատկապէս No. 7344-ը, իսկ 7345-ը
համեմատելի Զուարթնոցի հետ :

Պատկ. 64 զարդարանդակը սասանեան
արուեստին եւս յատուկ, հասկանալի է, ու-

թիւն է, Մարզանի ժողովածու. Շարլ Դիլը
համարում է այն Ե. դարի վերջերի կամ 2.-ի
սկզբի զարդ,* իսկ Սարգիսյանին 2.-ի. դա-
րի:*** Մեր չէնքի ժամանակը որոշելու
կրտան կարող ենք ընդունել նաեւ ճակատի
վիրական խուցուրի զրութիւնը, որից միտք
հանել կարելի չեզաւ :



Պատկ. 60

րին նմանները տեսանք Գ. Գլխի մէջ Էր. 69
եւ հէնց այստեղ քիչ ստաջ: Այս զարդը նը-
կատում է եւ հարեան ազգերի արուեստի
մէջ բաւական ընդարձակ չափով Ե.-2.
դարերում. օրինակ Կերինիայի արձաթի
տախտակների վերայ, որ այժմ Նիւ-Եորքի
Մետրոպոլիտէն թանգարանի սեպհականու-

*L'école artistique d'Antioche et les tresors
d'argenterie Syrienne, pl. 1 և 2.

**Strzygowski, L'ancien art de Syrie.
Medaillons de Shypre, p. 24: Altai-Iran. 44-45.
Taf. VII.

Կողքին դռնոււմ է մի ուրիշ քարի կըտոր, հայերէն արձանադրութեամբ, շեղադիր կուտած դերնով, որ իւր ծագմամբ նոյնչափ հին պիտի լինի, որչափ Մեսրոպեան կուտած երկաթադիրը, ուրեմն շեղադիր լինելու հանգամանքը արդեւ չէ հին ընդունելու այն: Տարաբաղդարար, արձանադրութեան շատ եղծուած լինելու եւ ժամանակի անյարմարութեան պատճառով, չկարողացանք տեղում վերժանել, ինչպէս եւ լուսանկարից յետադայում: Բայց առանց հայերէնի էլ վրացերէնի գոյութիւնը չի հարկադրում բացասել չէնքի հայկական ծագումը. Գիրք Թղթոցի մէջ պահուած ժամանակակից դրանք վկայութիւնները հաստատում են Գուգարաց դաւառի մէջ Զ. դարում հայերէնն ու վրացերէնը հաւասարապէս որպէս եկեղեցական լեզու գործադրութիւնը, որ անկարելի կը լինէր այլ եւս է. դարի առաջին տասնամեակից յետոյ, երբ բաժանուեցան երկու աղբերը եկեղեցականապէս եւ թշնամութիւնը յօրացաւ նրանց մէջ: Վրացերէնը երեւան է գալիս մէկ էլ Զաքարեանների շրջանում, երբ քաղաքական սերտ գործակցութիւն էր ստեղծուած երկու աղբերի մէջ: Նախընթաց բոլոր համեմատութիւններն ու ցուցումները ի նկատի առնելով, Կողքի եկեղեցու ծագումը պէտք է նշանակել ոչ ուշ, քան Զ. դարի վերջերը, եթէ ոչ աւելի վաղ:

Մեր ցուցադրած րեկորների բաղմադան երեւոյթներն ու մոտիւնները՝ շուշանածաղիկներն ու քամաշկանները, քառաթև եւ վեցթևեան խաչերը բոլորակների մէջ առնուած, սինների խարխալներն ու նրանց բոլորակութիւնը, բոլորը հարստացնում են մեր բերած փաստերը, թէ այս եկեղեցին մի չէնք է նախ քան է. դարը հայաստանում գոյութիւն ունեցող գեղարուեստական հոսանքի, որ մեռել է սկսում կամ մեռել է արդէն է. դարում աղային ճարտարապետութեան կատարելապէս ծաղկման շրջանում: Յետագայ (Պատկ. 65) խաչերը մասամբ եկեղեցու ծագման եւ ոմանք աւելի ուշ ժամանակին են պատկանում, բացի ամենից ձախ րեկորը, որ նախական շրջանի մնացորդ է:



Պատկ. 61



Պատկ. 62

Այս հաստատվածի Ա. Գլխի մէջ, ուր գերեզմանական կոթողների տեղադրութիւնը կատարեցինք, յիշեցինք Թալինի անուներ, ուր բազմաթիւ մասցորդներ կան. այդ վայրը կամաւորական իշխանների նստոցն էր, նոր րատով մայրաքաղաքը: Նրանք, րատ աւանդութեան Հայաստանում հաստատուեցան Գ. դարի սկզբում: Տրդատ քրիստոնեայի ժամանակ, որպէս սեպհականատէր Արշարունեայ եւ Շիրակայ գաւառներին. նորա կարեւոր դեր են կատարել Հայոց պատմութեան մէջ Մամիկոնեանների հետ եկեղեցու եւ հայրենիքի պաշտպանութեան գործում եւ անհետանում են կամ երկրորդական դասում Ը. դարում, ծախելով իրենց կայսրածները Բագրատունիներին: Բայց նրանց ծառայութիւնը ունիլի փոքր չէ հայ ճարտարապետութեան եւ գրչութեան արուեստի պատմութեան մէջ, որովհետեւ նրանցն է կամ նրանց իշխանութեան մէջ աշտղիսի յուշարձաններ, որպիսին Տիկորն է եւ. դարի վերջերից կամ Թալինի գոյոց եկեղեցիները, հայապաղ Մրենը Է. դարում: Թալինի եկեղեցիներից փոքր է. դարի առաջին կիսի գործ է, որի արձանագրութիւնը, թէ եւ թուական չունի, բայց «Ներսէ՛հ ապո՛հիօղաւ պատրիկ Շիրակայ եւ Արշարունեայ Տեր» մեղ յայտնի է Այամանի եւ Մրենի արձանագրութիւններից, տաճիւնը Հերակի կայսեր 27, իսկ երկրորդը 29-րդ տարին շինուած, այսինքն 637 եւ 639 թուականներին:՝ Երկրորդ մեծ եւ աւելի փառաւոր տաճարը շինութեան թուական չունի, բայց նա աւելի ուշ էլ, քան Ը. դարի սկիզբները, երբ գաղարկ էր գրեթէ, երկու դար շինարարութիւնը Հայոց մէջ՝ տարաւան հաւածանքների եւ պատկազմների պատճառով: Այս տաճարի յետագայ մի արձանագրութիւն գրուած է ՄԼԲ=783 թուականին:՝

* Տես մեր Գրչութեան Արուեստը. Գ. §6:

** Ամդ. §11: Բնագիրը տես եւ Ալիշան, Այրարատ, 138:



Պատկ. 63



Պատկ. 64

Արդ, Թալինը մինչև է. դարի կէսերը չէր կարող առանց եկեղեցու լինել, գերեզմանական կոթողների ստուար մնացորդներն որ ունինք այստեղ, ամեն տեղ կապուած տեսանք բաղնիկի եկեղեցիների զոյութեան հետ, դորան ապացոյց պիտի համարել: Նրանք դռնուած են այժմ մեծ եկեղեցու մօտ, բայց բերուած են գիւղացիների կողմից եւ իրրեւ չիմաքար զործադրուած իրենց ննջեցեալների վերայ մերձակայ մի վայրից, որի հետքերը, տարբարողաբար դռնել չկարողանաք, որբուած լինելով կամ այլերների տակ

քը, ձախ ձեռքը վեր բարձրացրած, որպէս նշան պաշտաման կամ երկրպագութեան, Adoration, ինչպէս կը տեսնենք աւետման կամ Աստուածածնի պատկերադրութիւնների մէջ եւս. ուրեմն սովորական այս ժամանակի քանդակուած պատկերադրութեան մէջ:

Վերելի պատկերը ձախ ձեռքին աւետարան ունի բռնած, իսկ աջը ցած է ձգել. ունի լուսոյ սլաակ բոլորակ, հագուստն էլ նման Օձունի առաքելոց հագուստին, մինչև ծրնկները հասնող պարեզօտ, իսկ ձախ ուսի վերայից վերնադիւստը ձգած, ծածկուած է կուրծքը, միւս փէշը լընուած է ծնկներից



Պատկ. 65

ծածկուած:

Այդ կոթողներից մէկն է Պատկեր 38 խողալուս մարդկային Ֆիգուրով, որ համեմատեցինք Օձունի նոյնանման երեսօթի հետ. եւ նոյնը տեսանք նոյն տեղի ուրիշ կոթողների վերայ (Պատկ. 39, 40, 41), վերջինը կին: Սրանցից առաջին երկուսի վերին Ֆիգուրը սուրբի պատկեր է, որ նոյն երեսօթի դրական բովանդակութիւնն ի նկատի ունենալով, պէտք է նոյնացնենք Գրիգոր Լուսաւորչի հետ. խողալուսը՝ այսինքն Տրդատ՝ համբուրուած է Ս. Լուսաւորչի ոտ-

չէլ ցած, բայց ոչ պարեզօտի երկարութեան: Յատկանշական է պարեզօտի ե թիկնոցի խիտ առ խիտ ծալքերը, որ սիրիական աղբեցութիւն կրող քանդակներին է յատուկ: Սուրբի ձեռքին կաղժած գիրքը, վոխառակ դաւարուն մազաղաթի, չպէտք է մեղ պարանէ քանդակի ծագումը չորրորդ եւ հինգերորդ դարը տանել, որովհետեւ կաղժի ծագումը շատ աւելի հին է. չորրորդ դարից ունինք քրիստոնէական քանդակներ* եւ հինգերորդ դարից արդէն ս. գիրք կաղժով, Codex

*Burckhart. Die Zeit Constantins des Grossen. պատկ. 90. 91.;

Sinaiticus—ը: Դէմքը չարդուած է, բայց կտ-
րելի է զարգացար կարգել միւս օրինակնե-
րից, որ կիսով չափ անեղծ են, և Երեւում
ամ., լայնքը 45 սմ.:
Հակասակ կողմը քանդակի լայնքը 46
սմ., երկարութիւնը 120: Թւում է կնոջ



Պատկ. 66

Են զլիւի մաղերն ու թաւ մօրուքը, աչքերն
ու քիթը: Կոթիկի մնացորդի մեծութիւնն է
150 սմ. բուն քանդակը և արտադրանքը 16
սլասակեր, գէմքը փշայած (Պատկ. 66), հա-
զուստի ներքնադակտը մինչև ոտները, իսկ
վերնադակտը քիչ կարճ. երկար բաճկոնից

ձգել է աջ ուսի վերայից եւ ճարձանդէլ պարանոցի տակ։ ձեռքերը դուրս հանելով վերնազգեստի տակից, եւ բարձրացնելով աղօ-

թեան։ Ոտքերին թւում է անկրունկ կօշիկ։ Ֆիզուրի ոտքերի տակ կոթաւոր ականթի և՛ ընդ սրածայր տերեւները վեր բարձրացած,



Հ. Կ.

Պատկ. 67

թողի դիրքով, որով ներքնազգեստը բաց է ձախ կողքից, ընդհանուր նմանութեամբ վաղ բիւզանդական սլաշտօնական զգեստաւորու-

իսկ երկուսը դէպի ցած խոնարհած, որ նըմանութեամբ ունինք եւ ուրիշ կոթողների վերայ։ Երբորդ երեսը՝ պատուանդանի վե-

բայ կոթով հաստատուած խաչ (Պատկ. 67), սլաքներ իրար յետեւից, նրանց մէջ երկրորդը նոյն ձևի, իրար վերայ, որ անմիջիկ նշանակութիւն պիտի ունենայ (Պատկ. 70ա) .




Պատկ. 68

յուրիշ զաղափար են տալիս Պատկ. 68, 69 : նման սորան այդ կողմից Պատկ. 70բ . վերին Ձախ կողմից երևում են սրածայր երեք եւ մասը կոտրուած : Յիշեցինք եւ խորակերպ կնաջ մի պատ-

կեր (Պատկ. 41). այստեղ խոզի դռնէն ա-
ւելի նուրբ է եւ սուր, զլիւին էլ լաշակ
ձգուած եւ բոլորակ լուսոյ պսակով: Աջ

պիտի տեսնենք սորանից դատ՝ Թայինի ուրիշ
արձանների վերայ: Հակառակ արտ. խողա-
կերպին սա ունի բոլորակ լուսոյ պսակ. հա-



Պատկ. 69

ձեռքով բռնել է ձողարարձ խաչ կամ խաչա-
զլուխ դաւազան, ինչպէս տեսանք Օձունում,
Կողբում (Պատկ. 56), Լճրատալանքում եւ

զիւ է երկար կանաչի շրջադրեալ եւ ուսերի
վերայից ձգել չարսառ, որի երկու քղանցք-
ները առաջի մասից ցած են իջնում. աջ ձեռ-

բը պրէլ է կրծքին՝² Կոթողի վերևի երեսը
չորս տեղաներից կազմուած տկանի է պարս-
կական, երկուսը վեր բարձրացած, իսկ եր-

կու ժողովրդ տեղեւ գէպի ցած կախուած, յա-
նախ կրկնուած Թալինի Կոթողների վերայ
ևւ ալլուր :



Պատկ. 70ա


²Strzygowski-ն իւր Armenische Bau-
kunst-ի մէջ, եր. 719 տպել է այս պատկերը
նշյնացնելով այն Տրդատի հետ, որ սխալ է :

Պանդակը կնոջ պատկեր է անկասկած, ոչ
միայն առելի մուրք դէմքով, այլ ևւ կանացի
զգեստով :

Սորա հակառակ կողմը դարձնալ երկու
տեսարանով քանդակ է, վերելի պատկեր վե-
րայ շուշանաձաղիկ, կողքերից երկու տե-

նած (°), քրճաղղեստ Յովհաննէս Մկրտիչ
(Պատկ. 71) : Կողքին ձողարարձ խաչ :

Երբորդ երեսը նոյնպէս երկու տեսարա-




Պատկ. 70բ.

րեւով, իսկ ներքեւը բոլորակ նիւթուսով մի
սուրբ, ականջներէ մօտ կտրուած մազերով,
երեսը լիչացած, ձեռքերը հաւատամք բռն-

նով. վերեւում ամբողջ հասակով կանգնած է
թեւաւոր հրեշտակ, աջով խաչակնքում
է (°), ձախը կրծքին, ղէմքը փչացած,

միայն ձախ կողմից երևում է զանդուրների
և լուսոյ օդտակի մի մասը: Հազել է երկար
բանկոն, մէջքը լսթէ դօտիով կապած, որի
Հակառակ ուղղութեամբ, որ Հնութեան նը-
շաններից մէկն է: Վերան ձգել է փիլոնա-
ձեւ վերնադղեստ, ուսերի եւ կրծքի վերայ




Պատկ. 71

կապի ծայրերը իջած են դէպի ցած: Երևում
է փոխանի ներքեւի բերանը: Կօշիկների
կրունկները իրար մօտ եւ ոտքերի ծայրերը
ծալքերով (Պատկ. 72): Սորա տակը Աստուածածինն է, նստած
աթոռի վերայ, Յիսուս զբիւն: Աստ-

ուածածին բոլորակ լուսոյ սրակ ունի
ղլխին, դէմքը փշացած, բայց աջ եւ ձախ
կողմից երկու խոտրալիքներ իջած կրճքին:
Հագել է մինչեւ ոտքերը հասնող հորիզոնա-
կան ծալքերով ներքնազգեստ եւ վերան ձը-

մայրը ձախով բռնել է եւ աջով թեթեւ-
հպել ծնկներին: Յիսուս հագել է մինչեւ ոտ-
ները հասնող երկար պճղաւոր արեւելեան
բաճկոն. երեսում են ոտները, երկուսն էլ
դէպի աջ ուղղուած: Զախով աւետարան է




Պատկ. 72

դել նոյն ծալքաորումներով քղամիդ: Զախ
ծնկան, բայց կարելի է ասել դողին, քիչ
յենուած մօր ձախ թեւի վերայ, նստել է
ուչ մանուկ, այլ պատանի Յիսուս, որին

բռնած, իսկ աջով օրհնում է. երեսը դար-
ձրել է դէպի ձախ: Մարիամ ոտքերի տակ
ունէր պատուանդան, ինչպէս նոյն տիպի
Ուջանի Աստուածածինն ունի, բայց այստեղ

Կարուած է : Կոթոյի բարձրութիւնն է 120
սմ : , լայնքը 35 :

(Պատկ. 72) , հաւանորէն ննջեցեալը : Եկա-
րը զաղափար է տալիս եւ կոթոյի ձեւի մա-
սին :




Պատկ. 73

Զորրորդ երեսը , վերեւի ճակատը ա-
կանթ , իսկ ներքեւը նիւթոտաւոր մի մարդ ,
աջով ձողարարձ խաչ բռնած , ձախը կրծքին

Մի այլ կոթոյ երկու տեսարանով : Վե-
րեւում դարձեալ մի թեւաւոր հրեշտակ ,
բայց տարրեր ձեւակերպութեամբ , քան նա-

խընթացը՝ ունի մեծ, բոլորակ լուսոյ պը-
նակ, մաղերը կարուած ականջներէ մօտ.
Հագած է երկար մինչեւ ոլօքները հասնող

բար մօտ եւ ոտքերն հակառակ ուղղութեամբ
(Պատկ. 73) : Աջ ձեռքը վեր է բարձրացրել,
ափը դէպի նայողը բացած, իսկ ձախին




Պատկ. 74

շրջապատ . ուսերի վերայից ձգուած թիկնո-
ցը, որի երկու քղանցքները ուսերի վերայից
ցած են իջնում առաջակողմից, կրունկները ի-

գունդ ունի բռնած : Ուշադրութեան արժա-
նի է հրեշտակի ողջունի ալք ձեւը, որ երե-
ւում է և Աստուածածնի քանդակների վերայ .

Լուսին Այգեհատ գիւղի աւերակ եկեղեցու
ափսիղի շխախաչին պատի մէջ հազցրած է
մի գերեզմանական կոթող, որ Աստուածած-

րեզմանական կոթողի պատուանդանի վերայ
յետայ (Պատկ. 85) : Բայց հետաքրքրական
է, որ նոյն երեսօյթը տեսնում ենք ևս կոթ-




Պատկ. 75

նի պատկերն է, Յիսուս ձախ թեւին, իսկ
աջը վեր բարձրացրած, ինչպէս հրեշտակի
թեւն է ալստեղ : Նոյնը կը տեսնենք մի գե-
տական գերեզմանական արձանների վերայ :*

*Կալիբէի Թամգարան, տես Պատկ. 42 :

Ներքևի Ֆելուրը մի մարդ է, կողքին
 ձողարարձ խաչ, ձեռքերը հաւատամք բըռ-
 նած : Ունի բոլորակ լուսոյ պսակ . մազերը

դնում զէպի ցած սաւառնոյ հրեշտակը .
 Պատկ. 43. որի կարեւոր նշանակութիւնը
 մամանակի եւ հոռանքի որոշման համար տե-



Պատկ. 76

խիտ եւ կտրուած աշնպէս , ինչպէս նախըն-
 քացները : Յովհաննէս Մկրտիչն է , միւս կող-
 մը մկրտուող Յիսուս , որի գլխին պսակ է

սանք վերեւ (Խր. 64) : Արձանը վերեւի մա-
 սում ունէր մի այլ վերջաւորութիւն , հա-
 ւանօրէն խաչ տնկած , որովհետեւ նկատուում

է փորումքը, որի մէջ հաստատուած պիտի լինէր այն ։

Է .

Պատկեր 74 մի արձանի մնացորդ է , միայն ներքևի տեսարանների մեղ հասած , որի տափին երեսը ականթ է մեծ , որ ցու-

ցի տակ հարձանդով կայուած և ցարդա-
րուն , ունի հասկածաւ ներքնազգեստ մինչև
սունկեր հասնող , որի վերայից հազել է բո-
լորակ վերջաւորութեամբ փորութարի նման
մի բան : Եւկու ձևերով կրճէի վերայ բո-
նել է մի դիրք : Ուրեքը բոցիկ և նրանց



Պատկ. 77




Պատկ. 78

ցարկեցինք առաջին մասի մէջ Պատկ. 9 :

Սորա հակադիր կողմը մարդու քանդակ
է , դէմքը փշաքած , բայց նկատելի ալաների
ներքևի մասը և ծնօտը : Վերան ձգել
է փիլանածաւ վերնազգեստ , պարանո-

տակ կոթաւոր զոյգ ականթներ , որոնց զրաի
թուերը անցնում էին արձանի աջ և ձախ
կողմերը , ինչպէս երևում է հետեւեալ պատ-
կերի մէջ (Պատկ. 75) , որ կանգնած է
զարձեալ ականթի վերայ , մի ձեռքը վեր

բարձրացրած, միւսը կրճքի վերայ: Մին-
չև ծնկները հասնող եւ իրանի վերայ
սկզբում տունիկայ, մէջքի վերայով ձրգ-
կաղիւր կողմն էլ ուրիշ նորութիւն է բերում.
դարձեալ կոթաւոր ականթի վերայ կանգնած
է մի ֆիգուր, թւում է կօշիկներ հագած եւ



Պատկ. 79

ուած թիկնոցը ճարմանդուած պարանոցի
տակ, անդրավարտիկը խրուած կօշիկների
մէջ, թւում է զինուորական: Իսկ սորա հա-
սնողը ավարտիկի ծայրերը ճիւղերի մէջ ան-
ցուցած: Ներքնազգեստի առաջին մասի քը-
ղանցքներն են միայն նկատելի վերից վար.

վերան ձգել է մի թիկնոց, որ մինչև ոտներն
է հասնում: Ձախ ձևերով մի բան է բռնել,
թև գրել է կրծքի վերայ, պարզ չէ: Հետա-
գլխանոցը մեծ նմանութիւն ունի Սաղ զին-
ուորականի գլխանոցի հետ Պերսոպոլիսի
բանդակների մէջ:*



Պատկ. 80

քրքրական է հայկական վեղարի նման գլը-
խանոցը (Պատկ. 76): Դժուար է մեղ հըշ-
դաթեամբ որոշել քանդակի խմատը, բայց

*Sarre, Die Kunst des alten Persien.
p. 29: Պատկերի տակ նշանակում է Krieger
in Sackischer Tracht: Sbu lu Herzfeld, Tafel

Ը.

Թալինի մեր նկարադրած կոթողներից նի էին: Բարերազգարար, Հէնց Թալինում
 ոչ մէկը պատուանդան չունէր, բայց այդ չի ունինք երկուսը նոցանից, թէև անջատուած




Պատկ. 81

նշանակում, թէ նրանք առանց պատուանդա-
 XVI. Sackisches Volk. Persepolis, Berlin.
 Museum.

րուն կոթողներից, բոլորն էլ ծածկուած ար-
 մէջաւոր քանդակներով: Դրանք քառանկիւ-
 նի մեծ քարեր են, մէջը փորուած եւ յարմա-

բեցրած անկեղտ բուն կոթողը, ինչպէս յետագայ դարերի խաչ քարերն էլ ունին, թէպէտ տարրեր ձեւերով:

Ըստ են նրանց մանրամասնութիւնները: Եթէ առաջին երեսն ընդունենք Աստուածածնի քանդակը, ձախից աջ ընթանալով, երկրոր-



Պատկ. 82

Պատկեր 77-78 զաղափար են տալիս պատուանդանի ձևի և քանդակների դասուրումիւն մասին, իսկ Պատկ. 79-82 տա-

գը կը լինի խաչը, երրորդը երկրաչափական հիւսուածքը և չորրորդը երկրաչափական միայլ ձև քառանկիւնիների հետզհետէ փոք-

րացումով, մինչև վեցերորդը, որ կեղտո-
նական է, դրքի կաղմի նմանութեամբ (Պատ-
կեր 81-82) : Եւ կարծում ենք չենք սխալուել,
եթէ աւետարանի կաղմի պատկեր ընդունենք

խօսքի եւ անձի ներկայութիւն : Բրդաճորի
կոթողի վերայ եւս տեսանք զծաղրական նոյն
ձեւով քանդակ խաչերի հետ : Մանուկ կամ
հասակաւոր Յիսուսի ձեւքին միշտ աւետա-



Պատկ. 83

այդ երկու քանդակները : Նիւթական խաչի
հետ աւետարանն էլ պաշտաման կամ յար-
գանքի առարկայ էր . աւետարանը իբրեւ դիրք
համարուում էր որպէս Քրիստոսի կենդանի

րան կայ քանդակուած : Աւետարանի վերայ
են երդւում կամ ուխտ կատարում մեր Ե.
դարի հայրերը : Նա նիւթ էր նաեւ նկարչու-
թեան Զ. դարի կամ է՝ սկզբի մատենա-

գրական վկայությունը՝ Վրթանէս քերդոյի
«Յազազս ոյտակերամարտից» գրական
մէջ՝ «Քանդի եւ գոթոյս Աւետարանին տեսա-
նեմք նկարեալս, ոչ միայն յոսկոյս եւ (յ)ար-
ծախոյ՝ այլ եւ յոսկերաց վրդոյ եւ կարմիր

բանի Փրկչին որ ի մազադաթին գրեալ է»։*
Գծադրական դարգարանքն անշուշտ որ եւ է
սխմվելիկ նշանակութիւն ունի, արուեստի
հետ կապուած ։

Պատկերադրական տեսակէտով ամե-



Պատկ. 84


մորթով կապեալ, եւ մեք յարմար երկիրդա-
դանեմք արույ Աւետարանին կամ համբու-
րեմք՝ ոչ եթէ փղին ոսկերաց մատուցանեմք
գերկրդադութիւն կամ դաբալին, որ ի յերկ-
րէ՝ բարբարոսաց եկեալ է ի վաճառս, այլ

նից հետաքրքրականը Աստուածածնի քան-
դակն է, նստած ակոսի վերայ, զլիւին լու-

*Սիւն. 1927. 61։

սոյ պսակ եւ լաշակ, որի քղանցքները ուսե-
րի վերայից ցած են իջնում զէտի մէջքը.
զէմքը փշացած է: Ուսերին ձգել է թիկնոց,

դուքեամբ ծալքաւորուած: Թիկնոցի տա-
կից դուրս են բնկած ձեռքերը, ձախոյ դըր-
կել է որդուն, իսկ աջը դրել նորա ծնկների




Պատկ. 85

քղանցքները մէջքի վերայից եւ առաջամա-
սից ցած իջած: Ներքնադղնատը երկար, հաս-
նում է մինչեւ ոտները հորիզոնական ուղ-

վերայ: Աստուածածնի ոտքերին փափուկ
կօշիկ է, ոտքերը դրել է քառանկիւնի պատ-
ուանդանի վերայ: Նայողի աջ կողմից լաւ

երևում են աթուի զարդերը, երկար մութաբայ, զարդարուն կտորի վերայ, որից զոյգ ծոցեր ցած կախում:

կրնքում է, ձախով աւետարան պիտի բռնած լինէր, քիչ երևում է: Հագել է մինչև ոտները հասնող բաճկոն: Երկու կողմից կանգ-



Պատկ. 86

Յիսուս սրտանի է և ոչ մանուկ, նստել է մօր ձախ ծնկանը, ունի լուսոյ պսակ, դէմքը փչացած, աջը վեր բարձրացրած՝ խաչա-

նած և մի մի հրեշտակ երկար թևերով, մէկը կախ մինչև գետին, միւսը վեր բարձրացրած և միմեանց խաչածնելով, կամար

և հովանի են կազմած մօր և որդու վերայ, նազդեստ, վերայից կարճ, անթեւ բաճկո-
որպէս պաշտաման կամ սպասարկութեան նուկ, որ ասորա-հայկական հալուստ է
նշան: Նրանք երկու ձեռքերով, վերից և վա- մինչեւ այժմ էլ. ասել է, Աստուածածնի



Պատկ. 87

րից բռնել են Աստուածածնի աթոռը: Շատ պատկերազրութեան այս տիպը ծագել է մի-
հետաքրքրական են զգեստները. հագել են ջազետական-ասորա-հայկական շրջանում:
մինչեւ ոտները հասնող շապկաձեւ ներք- Այս մասին յետոյ եւս, Աստուածածնի տի-

պերի մասին խոսելիս : Պատկերի մեծությունն է 88x60 սմ. : Այս քանդակը նմանութուն է բերում Թերաքի Աստուածածնին Կալքիդի թանգարանում, նստած և ևրկու շրջապատներ կողքերից :⁶ Մերք միայն շրջապատները բնական Աստուածածնի պատկերը, ինչպես Պտղափանքում Քրիստոսի մե-

ղալիոնը, ու բնական քանդակն աստուած է պատկերից :

Աստուածածնի քանդակից զէպի աջ մի զեղեցիկ խաչ է (Պատկ. 80), թեև քեր անկուններում ներքից և նրանց արտաքին ծալքերում մի մի զնդակ. ուղղահայեաց թևի վերին մասը կոտրուած : Յաչը ներքևի



Պատկ. 88

⁶Strzygowski. Hellenistische u. Koptische Kunst. Bulletin de la Société Archéologique d'Alexandrie, No. 5. 1902 Wiene p. 93. նաև Koptische Kunst. S. 8 u. 11. Die Baukunst. Պատկ. 678-680. և 716-717 :

թևից կամ խալիսից աջ և ձախ, դուրս են եկել և զէպի վեր բարձրացել մի մի զեղեցիկ արձանների տերևներ : Ամբողջը զծագրական և քանդակման կողմից ազնիւ և զեղեցիկ : Յաչի բարձրութիւնը կոտրուած մա-

սով 65 սմ., (պիտի լինէր 69), անաղարտ
մասը 52 սմ.:

Երբորդ երեսը յիշեցինք, որ չորս զու-
գահեռ գծերով հիւսուածք է, որի հիշդ նմա-

Պատուանդաններ են եւ Պատկ. 83-84.
ստովինը շուշանածաղիկ է, երկու տերեւ-
ներով, որ տեսանք նաեւ Կոյրի մի խոյակի
վերայ: (Պատկ. 58-59), ինչպէս եւ Ղարա-



Պատկ. 89

նը տեսանք եւ Բրդաճորի կոթողի վերայ եւ
յատուկ է նաեւ սասանեան արուեստին (Պատ-
կեր 81): Երկրաչափական այս քանդակները
սիմվոլիկ նշանակութիւն ունին անշուշտ:

Ջալարի (Պատկ. 60) եւ մանաւանդ Օձունի
կոթողների վերայ եւ Պողոսիանքի արեւմտե-
կան լուսամուտին: Նոյն պատուանդանի միւս
կողմն է քառանկիւնի շրջանակի մէջ հաւա-

սարահող մի խաչ, թևերի և պորտի վերայ մի մի գնդակով, որ հնագույն ձևակերպութիւններից մէկն է, մինչև Դ. դար հասնող հնութեամբ (Պատկ. 84)։ Մի երրորդ պատուանդանի (Պատկեր 85) երկու Փիղոսները, հասնօրէն, այդ և կին, ներջեցեալներ են, որոնք մի ձևաքր իրար վերայ են դրել, մէկը աջ, միւսը ձախ, իսկ միւսները վեր բարձրացրել, որպէս նշան պաշտաման։ Ուշագործ թեան արժանի են վաղ բիւզանդական հագուստները, որոնց նմանը տեսանք և Պատկ. 66 կոթողի վերայ։ Նոյն

այգպիւնները չեն պակասում այլ վայրերում։ Ժենք կտրող ենք երկու այգպիւն բոլորովին իրարից հեռու վայրերից յիշել, ինչպէս Հատիճի (Պատկ. 91, 92, 93) և Մանայիչէնի (Պատկ. 19) կոթողները։ Հատիճի հնագույն պատմութիւնը մեզ յայտնի չէ, ներկայ տաճարը Զաքարէ և Իւանէ սպասարանների ժամանակի դործ է, այսինքն ԺԳ. դարի առաջին քառորդի. այդ ժամանակից էլ ունինք արձանագրութիւններ և ձեռագրական արժէքաւոր մնացորդներ,* բայց չուրջը եղած մնացորդներից դատելով, նա



Պատկ. 90

պատուանդանի միւս երեսի երեք Փիղոսները թուում է մեզ հրէշտակը, որ ձևաքր բարձրացրած յայտնում է իւզարեր կանանց (Պատկ. 86) Քրիստոսի յարութիւնը։

Զմտաւանք յիշել, որ Թալիմում կան ուրիշ մանր ընկուրներ ևս կոթողների կամ խաչերի, ժամանակակից միւսներին։ Պատկ. 87-բոլորի նմանները տեսանք արդէն, 88, 89 հէլլենիստական սկիւպայտնի դրոշմով և 90 հուսարահող խաչեր։


Թ.

Թալիմում չեն մնացած պատուանդանի վերայ հաստատուն կոթողներ, բայց

մէկն է մեր հնագույն սրբավայրերից։ Այգպիւններից է հեռուեալ արձանը իւր հետաքրքրական քանդակներով և ներքևի մասի, պատուանդանի՝ պահպանութեամբ։ Արձանի վերևի մասը պակասաւոր է, որովհետև նկատելի է փոքրածքը, որ հաստատուած էր կորած մասը։ Արձանի առաջին երեսը ամենից անաղարտ մնացած մասն է.

*Ալիշամ. Շիրակ 15 և շար.։ Արասայ որդի Գրիգոր վարդապետի առաջնորդութեամբ ժամանակ ՈԿԸ=1219 րուին գրւում է Էջմ.—ի No. 1382 Ձեռագիրք։ Տես մեր խաղրակեանք Ա. հատոր. էր. 165։

պատուանդանի վերայ Դանիէլն է երկու ա- պահուած, ունինք, Երեսանից ոչ հետե,
 ուրիշներէ մէջ (Պատկ. 91), որոնք լիցում են էլլառ պատմական զիւղում, ուր ի միջի ա-
 մարդարէի հազուապատ. առիւծներէ կէս մա- լոց եւ սեպագիր մի արձանագրութիւն կայ




Պատկ. 91

սը անցնում է պատուանդանի միւս կողմե- Ժայռի վերայ: Դանիէլն այստեղ հազել է
 ըր. ճիւղ նոյն ձևով մի խոյակ, գուցէ եւ սասանեան չրջանի հազուատ. Բաճկոնի քը-
 կոթողի պատուանդան, աւելի մեծ եւ լաւ ղանցքները, ինչպէս եւ թեւերը բազուկներէ

մեա զարդարուն: կապել է լայն գոտի, ուսե-
րին ձգել է թիկնոց: Քիւները վեր բարձրացրած
աղօթողի դիրքով: Ունի բեխեր և մօրու բ-
րժարկը նախառէ մասում զարդարուն, ա-
սել է, իշխանական: զյխարկի մասերը ա-

սաները հասնող կապայ և վերան ձգել նոյն-
այնի ծալքաւոր քղամիզ, օրի վերին քը-
ղանցքները իջնում են կրճքի վերայ: քղա-
միզի վեջերը հորիզոնական ուղղութեամբ
պտտել է վրէժ և ծէկները առաջամասը:



Պատկ. 92

կանգնել: կողմից մաղերի վրայով վար
կախուած:

Բուն կոթողի երեսին Փրկիչն է կանդ-
նած, բոլորակ լուսոյ պտակով, մաղերը եր-
կար և երկու կողմից ականջների վերայով
կախկնքով ուսերի վերայ իջած: Հաղել է
երկար, ուղղահայեաց ծալքերով, մինչև


ծախ ձևաքին բունը է աւետարան, իսկ աջով
օբնում է: Ահա ձեզ Յիսուսի պատկերա-
դրութեան արեւելեան ձևակերպութեան ա-
մենահին օրինակներից մէկը, առարա-միջա-
ղեաւական դրոշմով:

Յիսուսի ոտքերի տակ կայ մի ուրիշ քան-
դակ, տարարազդարար, չառ եղծուած վի-

ճակում, թում է, ծալապատիկ նստած, երկու ձևոթերը վեր բարձրացրած, բռնել է Յիսուսի ոտքերի տակի գերանը, ո՞վ է նա, զփուլար է մեզ կռահել:

Նրկրորդ երեսը պատուանդանի մասը

ղեստը, անդրավարտիկը եւ գօտին նման Դանիկին կամ ներքևի մարդուն, բայց վերնաղգեստը թեւաւոր է, ալ կողմից վերնաղգեստը յետ է ձգել ուսի վերայ, որով բացուել է ամբողջ ալ կողմը վերից վար, աջով



Պատկ. 93

փչացած, իսկ կոթողի երեսին երկու Ֆիդուր իբար վերայ կանգնած (Պատկ. 92). ներքևինը փոքր, մօտաւորապէս նոյն դիրքով եւ զգեստաւորութեամբ, ինչպէս Դանիկին էր: Վերևի Ֆիդուրի զգեստը նոյնն է, միայն տարբեր ձևով հագնուած, որով եւ մանրամասնութիւն ենք ստանում. ներքնաղ-

խաչակնքում է: Իսկ ձախ կողմից վերնաղգեստը կախուած է ցած, ծածկելով ամբողջ կողմը. վերնաղգեստի թեւը որ չէ հագած, կախուած է ցած: Պարանոցի տակ վերնաղգեստը ճարձանդուած է: Դէմքը փչացած է, երեսում է միայն բոլորակ զլխարկի մի մասը, վերից վար դձերով մասերի բաժանուած,

վեց կողմերի: Ո՛րք են նրանք, ասել չենք կարող հաստատապէս, հաւանորէն երեք մանկունքներից մէկը եւ Դանիէլ հնոցի մէջ: Ոչ պակաս հետաքրքրական երրորդ երեսի քան-

թեւերի վերայ մի մի դնդակ, որ յաճախ տեսանք:

Պատուանդանի ձեւի կողմից լաւ է մնացած եւ Ծառայիչէնի կոթողը (Պատկ. 19),



Պատկ. 94

դակը, տարարադարար, ազօտ (Պատկեր 93). աթոռի վերայ նստած է Աստուածածին Յիսուս զրկին: Չորրորդ երեսը պատուանդանի վերայ խաչի քանդակ է, պորտում եւ

որ պտնուժ է Քասախ դեռի ձախ ափին՝ Եղիպատուչ (Տամջըրու) դիւղից ոչ հեռու: Պատուանդանի մի երեսին քանդակուած են հաւասարակող պսակի մէջ անուած եւ կո-

թաւոր դոյզ խաչեր: Իսկ բուն կոթողի երկու
երեսին ուղղապատայտ որթի վերայ ողկոյլի
և տերեւի փոխէփոխ շարք: Կոթողը կէսից
վեր կոտորուած է: Մենք նկարագրել ենք այս

մանական մի յուշարձան, որ այժմ գտնուում
է էջմիածնի թանգարանում և բերուած է
Սենեքերիմ Տէր Յակոբեանի ձեռքով Արա-
գածի հարաւային ստորոտի Ուջան գիւղից



Պատկ. 95


վայրի հնադիտական արժէքը իւր երկու ե-
կեղեցիներով, որոնց մօտ է և այս կոթողը:
Եր. 30:

Ամբողջապէս անաղարտ, միայն առանց
պատուանդանի մեր ձեռքն է հասել դերեղ-

ոչ հետու, կարարափանք կոչուած վայրից:
Ուջանը կամ պատմական տնունով Վժանը,
մէկն է այդ շրջանի յայտնի վայրերից, Աղ-
ցի, Կուաշի, Աւանի և Արուծի հետ բազմա-
թիւ հին յիշատակներով և բաղիւլիկ եկե-

դեցինների մնացորդներով: Տարբարողաբար այս յուշարձանի լուսավոյն նեղատիւններից արտատպութիւն չունինք, ստիպուած ենք բաւականանալ ձեռքի տակ եղած անյաջող լուսանկարներից:

baldachin), կրկնուժ է յաճախ կոչուական արուեստի մէջ:՝ Ապա դիւին լաշակ ևւ չաւրջը լուսոյ պատկ: Օձիքը զարդաբուն, ուսերին թիկնոց, որ իջնուժ է մինչև ոլորները, հորիզոնական ծալքե-



Պատկ. 96

Առաջին երեսը Աստուածամէնի բանդակն րնդունելով (Պատկ. 94), հետզհետէ կ'անցնինք միւս երեսների նկարադրութեան ևւ գնահատութեան: Եւս նստած է աթոռի վերայ, ոտքերի տակ բառանկիւնի պատուանդան կամ աթոռակ չորս ոտներով: Գլխից վերէը ճառագայթաձեւ մի հալանոց (Muschel-

բով, ինչպէս տեսանք Աստուածամէնի ուրիշ բանդակների վերայ (Պատկեր 79): Դորա տակից երևում են աւելի եր-

*Strzygowski. Die Koptische Kunst. p. 37. Պատկ. 44: 7293: Համարում է Ե.Չ.Ձ. գարի գործ:

կար շրջադրուստի կամ շապիկի զղանցքները, շապիկի ծալքերը վերից վար, ուղղահայեաց: Ոտքերին թւում է անկրունկ, փափուկ կօշիկ: Յիսուս պատանին (ompok) նստած մօր ծնկանք, Հաղած ունի երկար, մինչև ոտներին Հանող արևելական բաճկոն, ձախ ձեռքեր անտարան րսնած, աջով խաչակնքում է: Մարիամ երկու ձեռները կապած, զրկելով որդուն, որ ուշադրութեան արժանի փոփոխակ է նորա պատկերադրութեան մէջ: Պատուանդանի տակ եռատերև ականթ կոթաւոր: Արձանի մեծութիւնն է 177×40 սմ.: Խոյակաձեւ վերջաւորուած պրակի երեսը Աստուածածնի քանդակից բարձր եռատերև ականթի մէջ մի սուրբի անդրէ:

Աստուածածնից դէպի ձախ, նայողի համար, խողաղուս մի (Պատկ. 95) մարդաքանդակ է Թալինի (Պատկ. 38, 39, 40) եւ Օձունի նման, բայց ոչ չուխաձեւ հաղուստով, այլ երկար բաճկոնի վերայից փիլոնաձեւ զղամիդ, կրծքի ճարմանդուած: Խոյակի վերայ ականթ:

Հակառակ կողմը իշխանական մի քանդակ է, գլխաբաց, մաղբըր կախ մինչև ականջները, ներքնադիպտը մինչև ուղեքները, վերայից կապիճի նման վերնազգեստը մի թիչ կարծ. բացուածքից՝ աջ ձեռքը հանել է եւ վեր բարձրացրել, ափը դէպի նայողը, որ ողջունի եւ հաւատածքի նշան էր: Ուղեքների մօտ անդրաւարտիկը կօշիկների ձեռիների մէջ անցրած, կրունկներն իրար մօտ եւ ծայրերը հակառակ ուղղութեամբ: Ներքեւում դարձեալ եռատերև ականթ կոթով: Խոյակի վերայ պկանթ եւ Հրեշտակի անդրի (Պատկ. 94): Այս քանդակը իշխանական կոչեցինք, հաղուստի կողմից նման տեսնելով Թալինի (Պատկ. 66) քանդակներին:

Զորբորդ երեսը. ներքեւում դարձեալ նոյն կոթաւոր ականթը, եւ վերան կանգնած մի Փիղոսը, ներքնադիպտը մինչև ոտները, վերնադիպտը փիլոնաձեւ, աւելի կարծ, ձեռիներից թիչ ցած հասած: Ներքնադիպտի վերայից հագուստը հորիզոնական ծալքերով, մինչ դեռ ներքնադիպտին ուղղահայեաց, ինչպէս տեսանք Օձունի, Թալինի քանդակների վերայ, որ եկեղեցականների կամ առաքնաների պատկերներ էին: Գլխի չուրջը լուսոյ պսակ ունի եւ մաղբըր սանտրուած

են վերից վար՝ Թեւ Թեւ, ինչպէս Պողոսովանքում: Այլ կողմից պատուանդանի մէջ հաստատուած է մի սին կամ ձող, վերեւում քառանկիւնի վերջաւորութեամբ, ճակատին խաչի վերելի Թեւը, արդեօ՞ք Labarum, որ նշանակութիւն կ'ունենար եւ ծաղման մասնակի նկարային շարք: Պսակի վերայ յայտնի եւս նոյն ականթը, իսկ աւելի բարձր, ելնդաւոր ձուածնեների դարնէղ, կոտրած, հելլիսնական մի մոտիւ:

ԺԱ.

Թալինից դէպի հիւսիս, աւելի բարձր, Արաղածի զաղաթի ուղղութեամբ, Աղիաման գիւղն է, տարաբաղդաբար հնազոյն անունն անյալտ, բայց մէկը այս շրջանի ամենահին գիւղերից, հասնօրէն, Կամսարականների սեպհակախոթիւն, հետու չլինելով Թալինից: Այս հաստածի Ա. Գլխի մէջ եր. 51 դերեղմանական կոթողների տեղադրութեան մէջ տուել ենք հարկաւորը տեղի հնութեան եւ արժէքի մասին, յայտնելով թէ այնտեղ բացի Հովհաննէի տիպի հին տաճարից, որ գիւղի եկեղեցին է այժմ, գիւղից դուրս ձորի մէջ կայ եւ մի հին բաղնիքի եկեղեցու մնացորդ, խոյակի ձեւն ու քանդակները միանգամայն նման Տիկորի կամ Քասախի Ե. դարի եկեղեցիներին, բայց եւ մի լուսամուտի մնացորդ, որ իւր կողքերի եւ պսակի դարձերով, մեր ճարտարապետութեան ամենահին շրջանն է տանում, մասնաշինով եւ դեղարուեստական հոսանքի մօտաւոր հայրենիքը (Պատկ. 96): Նման մի քանդակ կայ Ամմանում, որի նկարները տալիս է Strzygowski-ն՝ Հայաստանի նուիրած իւր մեծ գործի մէջ, օգտագործելով այն որպէս ապացոյց իրանական հոսանքի աղբեղութեան եւ կոյր կամարների ծաղման տեղի:՝ Տարաբաղդաբար Ստրիգովսկու գործի հրատարակութիւնից յետոյ մենք չենք եղել կրքիկն այդտեղ, ուստի եւ աւելի մանրամասնութիւններ չենք կարող տալ, որ կարեւորագոյն արժէք կ'ունենար, դուցէ, արուեստի պատմութեան համար՝ աւելի հաստատուն եղբակցութեան դալու: Յամենայն դէպս մեր խնդրի համար իւր մեծ արժէքն

*Die Baukunst der Armenier und Europa. 1918. Wien S. 448 եւ չար. Altai-Iran. S.

ունի, որ այս հին եկեղեցուն կից ունինք եւ
 մի գերեզմանական կոթող հետաքրքրական
 քանդակներով: Կոթողի առաջին երեսը Ար-
 ասնկիւնի սեղանը, վերան նստեցրած ծա-
 լադատիկ ձեւով Իսահակը: Արահամը
 բարձրացրել է ձախ ձեռքը, բռնել զոհ-
 րանքը:



Պատկ. 97

բահամի զոհարկութիւնն է (Պատկ. 97):
 Եռաստիճան պատուանդանի վերայ անկուած
 է բունը եւ նորա վերայ հաստատուած քա-
 խից կամ մագերից, խից աջը մեկնել, երե-
 լի, սուրը ձեռքին, որ չի երեւում, վիզը
 կտրելու համար: Իսահակի գլխից վեր ե-

րեւում է մի բան, որ Սարեկայ ծառից կախ-
ուած խոյը պիտի լինի:

կուրծքը, որի նմանը տեսանք եւ ուրիշ քան-
դակների վերայ: Նորա գլխին եւս մի բան



Պատկ. 98.

Աբրահամը հագել է մինչեւ ուրջները պիտի լինէր, որ եղծուած է, հաւանօրէն
հասնող բաճկոն եւ ուսերին ձգել երկար, հրեշտակը, կամ Տիրոջ աջը, որ ցոյց է տա-
րիւդանդական կոչուած տողայ, որի վերին լիս ծառից կախուած խոյը: Ոմբանկարի
քղանցքները կախուած են ուսերից դէպի տակ սովորական ականթն է եռատերեւ, կո-

դերի տերևների կէտը միտ երևաներին ան- տեսանք կողքում (Պատկ. 56, մէջ տեղի բան-
ցած : Արրա՛սամի գահաբերութեան մի շատ դակը) :



Պատկ. 99

եղծուած օրինակի մնացորդն ունինք եւ Թա- Երկրորդ երեսը ներքեւից նոյն եռաթեւ
լինում, իսկ Երկրորդ օրինակ, Համեմատա- տեղանքն է, իսկ նորա վերայ մի ուրիշ բարակ
բար տեսանելի եւ տարրեր զտատարութեամբ ցողունի վերայ բոլորակ ծաղիկ (Ի՞նչ ծա-

դիկ), երկու կողմից մի մի տերեւ, որի նը-
մանութիւնը տեսանք Քրդաձորի խոյակնե-
րից մէկի վերայ: Ծաղկից վեր կանգնած է
մի մարդ, մէջքից վեր կտորուած (Պատկ.
98), նեղ անդրալարտիկով սասանեան շրջա-
նի եւ կօշիկներով. վերնազգեստը չուխայա-
մեւ, թեւը կախուած, հաւանօրէն ննջեցաւը:

Երբորդ երեսը ներքեւում նոյն ականթի
է, ինչ որ նախնիքաց երեսներում, բայց պատ-
կերաքանդակը եղակի է եւ նման չէ պատա-
հած ոչ մի տեղ. բաձկոնը սեղմ եւ մինչեւ
ծնկները հասած, իրանը զօտիով սեղմած եւ
զօտիի կապը առաջից կախ. ոտքերը ծած-
կուած ականթի յետեւը, որ Հնչլինական ձե-
ւակերպութիւն է (Պատկ. 99): Գլխարկի
ձեւն անորոշ, փչացած լինելու պատճառով:
Երկու ձեռքով զլիւրց վերեւ սկզուող ունի
բռնած, մէջը երկու բոլորակ հաց՝ երես-
ները ութ թեւանի խաչով զարդարած, որ
նուէր է մատուցանում, արդեօ՞ք վերեւի
անձնաւորութեան, որի ոտներն են միայն ե-
րեսում տարօրինակ կօշիկով (սանդալ): Մեկ
համար միանգամայն մութ է քանդակի նշա-
նակութիւնը:

Ջորբորդ երեսին ներքեւում նոյն ա-
կանթն է եւ նորա զլիւրց կտրաւոր մի սլաք,
սուր ծայրը դէպի վեր (Պատկ. 100), հաւա-
նօրէն նոյն սրածայր եռանկիւնների կամ
սլաքների նշանակութեամբ, ինչ որ տեսանք
Թալինում (Պատկ. 70-71):

ՅԲ.

Մի կարեւոր կոթող էլ ունինք Մաստա-
րայում, Արաղածի, արեւմտեան փէշերին,
Թալինից եւ Աղիամանից քիչ դէպի արեւ-
մուտք: Տեղի մասին չունինք աւելի հին տե-
ղեկութիւն, քան Է. դարի կէսերը, երբ
չինուած է այժմ էլ դեռ եւս կանգուն եկե-
ղեցին, Թէոդորոս Գնոնեաց (Գնթունե-
աց)՝ եպիսկոպոսի օրով, որը մասնակից ե-
ղաւ Ներսէս Գ.՝ի դումարած ժողովին 645
թուականին: Երևութեան այս արձանագրու-
թեան նոյնատիպը հրատարակել ենք մեր
Գրչութեան Արժուեստի Քարտէսի մէջ: Բայց
նախ քան Է. դարը այստեղ պէտք է մի աւելի
հին եկեղեցի եղած լինի, որի ապացոյցն է
այն դերձամանական կոթողը, որի հնութիւնը
մինչեւ Ե. դար կարող է հասնել իթէ՞ ոչ աւե-
լի վաղ: Այստեղ մի երեսին (Պատկ. 101)
տեսնում ենք բազիլիկ եկեղեցիների յատուկ

պլլատներին վերայ պայտածեւ կամար, եւ
նորա տակը լուսոյ պսակով մի ֆիդուր, տա-
րարազարար շատ եղծուած վիճակում, ձա-
խով աւետարան բռնած եւ աջով օրհնու-
թեան նշան, որ Յիսուսն է: Կամարի զլիւրց
քառանկիւնի շրջանակի մէջ մի առեւծ՝ խա-
ղաղ վիճակում, կողքին մի մարդ կանգնած
ձեւը վերան, նշանակութիւնը պարզ չէ մեկ
համար, շատ նման Կայրէքի կոպտական
թանգարանի No. 1693 մնացորդին: Պլ-
լատներին վերայ երեւում են եւ յունարէն
գրաֆիտներ, բայց նրանք կապ չունին կո-
թողի ծագման հետ: Կոթողներից ոչ մէկը
գրութիւն չունի:

Երկրորդ երեսը տալիս է մեկ ակնյայտին
աղերս բաղիլիկ ոճի հետ, որ ինչպէս քա-
նիցս չեւտիլ ենք Զ. դարի վերջերից տեղի
է տալիս աղապայն ոճին: Այստեղ տեսնում
ենք զոչդ բոլորակ կիսասիւնների մէջ ձողա-
բարձ մի խաչ, պտորում եւ թեւերի ծայրե-
րին ներսից մի մի դնդակ: Այս աւելի բարձր
Յիսուսի անդրին (Պատկ. 102): Այս հաւա-
սարակող եւ դնդակներով խաչի ճիշդ նմա-
նը տեսել ենք Յոսեփորոսի Էքրմաշտում,
իբր վաղ բիւզանդական արուեստի մի մնա-
ցորդ՝ ժամանակը 400 թուականով նշանակ-
ուած: Այս մասին մենք գրել ենք այլ առթիւ
մեր Հաւուց Թառի Ամենափրկիչը աշխատու-
թեան մէջ:՝ Իսկ բոլորակ կիսասիւններն էլ
մատնանշում են բաղիլիկ ոճի հոսանքը, ինչ-
պէս Տիկորի դրան կիսասիւններն են (տես
Մարչ. Պատկ. 368):

Բայց հետաքրքրական ուրիշ ապացոյց-
ներ է տալիս կոթողի հնութեան մասին եր-
րորդ երեսը (Պատկ. 103), նոյն պլլատներե-
րի մէջ ձողաբարձ, հաւասարակող եւ զըն-
դակներով խաչը, աւելի բարձր քառանկիւնի
շրջանակի մէջ՝ բոյսի կամ ծաղկի երկու կող-
մից իրար դիմաց երկու թուշուն, մի մտուր,
որ երեսան է գալիս փոքրիկ փոփոխակնե-
րով Դ. 2. դարերի զկաթիլների եւ սար-
կոֆագների վերայ,** բայց նաեւ Հայաստա-
նի նոյն շրջանի ջրիստոնէական արուեստի
մէջ իբրեւ կենդանութեան ծառի կամ աղ-

*Միւր Հաւուց Թառի Ամենափրկիչը. Էր. 38:

**Kraus. Geschichte der christlichen Kunst. I. 99, 253. Kaufman. Christ. Archael. 294, 311-313, 506.

բիւրի մի ձեւակերպութիւն, որին տեղում են
նորաւ հողինները: Այսպէս մենք ունինք իջ-
միածնի տաճարի հիւսիսային պատին (Պատ.

նայ դիւղի եկեղեցիներէ ձեւատաքարերի
գարդաքանդակներէ մէջ (Պատկ. 21), ոչ ուշ,
քան 2. դարը: Նոյն երեւոյթը կայ եւ կոպ-




Պատկ. 100

104), որ Դ. դարի մնացորդ է, Աղցի ստո-
րերէրեայ գերեզմանատանը նոյն դարի (տես
12), Քասախի հինգերորդ (Պատկ. 8) եւ Ախ-

տական Ե. դարի դործուածքներէ մէջ Քրիս-
տոսի անուան փակագրի (Monogram christi)
երկու կողմից (Պատկ. 105):

Ճիշդ մեր կոթողի առաջին երեսի նմանութեամբ երևոյթ կայ եւ կոպտական արուեստի մէջ. Սարգիսիօփոյն իւր նոյն արուեստին նուիրած գործի մէջ տալիս է

մարդու եւ տիւծի՝ հաւատարակող խաչ՝ պսակի մէջ, իւր խոսքերով. Das Kreuz in Lorbeerkranz ist typisch auf Grabsteinen,* որ տեսանք մեր կոթողի միւս երեսի վերայ եւ



Պատկ. 101

Bavit-ի վանքի փայտէ քանդակի մի պատկերը, յար եւ նման մեր կոթողին. այստեղ եւս սիննրի վերայ կանգնած կամարի տակ Քրիստոս աջով օրհնում եւ ձախով աւետարան ունի բռնած, իսկ մերինի քառանկիւնու պատկերաքանդակի փոխարէն՝ այսինքն

բաղմիցս այլ տեղերում: (տես Ծառայիչն պատկ. 19, բոլորակի մէջ եւ կոթաւոր.—

*Die Koptische Kunst, եր. 120. Taf. VII, No. 8775: Համեմատել No. 7285-ի հետ, որ Ե. դարի գործ է համարում:

Արուհի կամ Քալիքի խոյակի վերայ,* նմանը ունենք և եղիպտոսում: Քալիքի մի պատուանդանի վերայ՝ քառանկիւնի չըջանակի մէջ պատկ. 84.— Եւաղիմ բոյրբակի մէջ պատկ. 14 Աւանում Արազածի եւն.:†

Ի վերջոյ պիտի յիշենք երկու վայրերի մնացորդներն ևս, որոնք ձևով քիչ տարբեր են, բայց կարծում ենք կապուած գերեզմանական կոթողների հետ ևս ոչ չենք սխեմեր: Դոցանից մէկը գտնուած է Օչակահում, ուր Վահան Ամատունին և զարի քառասնական թուականներին Մ. Մկերտչի գերեզմանի վերայ շինեց մի եկեղեցի, որի յատակածից ևս Կուսիկեանի նկարից դատելով, բաղրիկայ էր: Այդ թանկագին մնացորդը խարխուլուած լինելով, իսպառ քանդուեցաւ Գէորգ Գ. կաթողիկոսի կողմից և նոր, ճարտարապետական տեսակէտով աւարտէ՛ք եկեղեցի շինուեցաւ: Այդպէս գտնուած է մի կոթող, ութ անկիւնանի բունի վերայ՝ խոյակով վերջացած, Զուարթնոցի խոյակները յիշեցնող սնով, որ կարծում ենք գերեզմանական կոթող էր:

Նման կոթողների մնացորդներ ենք համարում ևս հանդուցեալ Խաչիկի վարդապետի տէրութեան Պոլիսում երևան եկած պատուանդանները, դարձեալ Զուարթնոցի խոյակները յիշեցնող: Արզեմ* բառ Յովհաննէս կաթողիկոսի տուած տեղեկութեան Ներսէս Գ.—ի (641—661) շինած եկեղեցու մնացորդ, թէ աւելի հին: Այս պատուանդաններից մէկի վերայ քանդակուած է մի խաչ, դարձեալ թևերի վերայ մի մի զնդակ, իսկ հորիզոնական թևերի վերայ գէժ առ գէժ մի մի թուռն, ինչպէս քիչ վերև մատնանշուեցաւ:† Իսկ խոյակեւծն մնացորդների վերայ նկատուած են Կողբի և Բրդաճորի բնկորներ և խոյակների նման զարդեր, ինչպէս բարձր ցողունի վերայ ծաղիկ և հաս-

կածն քանդակ, առէլ է միւսնոյն զեղարուեստական հոսանքի ապացոյց:

ԺԳ.

Նախընթաց դրոշմների մէջ առիթ ունեցանք ուրիշ սուրբերի պատկերագրութիւնից աւելի Աստուածածնի պատկերագրութեան հանդիպելու:

Քրիստոնէական արուեստի մէջ Մարիամի պատկերագրութիւնը երևան է զայս Բ. և Գ. դարերում Հռոմի կատակոմբանների որմանկարչութեան մէջ:‡ Եփեսոսի 431 թուի ժողովից յետոյ, ընականաբար, երբ Մարիամի համար Թէոտոկոս—աստուածածին արտայայտութիւնը հաստատուեցաւ պաշտօնապէս, իրրեւ մաս վարդապետութեան (Dogma), առաւել զարկ պիտի ստանար նորա պատկերագրութիւնը արուեստի մէջ:

Ռուս երկու նշանաւոր գիտնականներ, Կոնդակով և Լիխաչեւ ընդարձակ մեծագործութիւններ ունին Աստուածածնի պատկերագրութեան ծագման ու զարգացման պատմութեան նուիրում.‡* նոքա ցուցումներ են տալիս, յատկապէս Կոնդակովը, որ Բիւզանդական նուիրական Օղիգլետրիայի տիպի Աստուածածինների նախնական ծագումը պէտք է որոնել արեւելքի՝ այսինքն ասորական պատկերային արուեստի մէջ, որ յետոյ Բիւզանդիայում բարձր զարգացման հասաւ և ապա անցաւ արեւմուտք, իտալական Նախավերածնութեան (Verrenaissance) և Վերածնութեան մագոննաների նախակարգապէս և զարգացման զարկ տալու:

Ինչ որ Ռուս գիտնականները միայն կուհելով են յայտնում, Հայաստանի գերեզմանական կոթողների պատկերագրութիւնը հաստատում է որպէս իրողութիւն, հնագոյն զարեւր մնացորդներով: Մենք փաստեր ևս

*Strz. Die Baukunst. եր. 411: Պատկ. 439, 440, 441:

†Die Koptische Kunst. եր. 63. Դ.—Ե. դարի գործ:

‡Անդ. եր 100, և Պատկ. 153: 8751, Քրիստոսի 600 քուակամի գործ:

*Պատկերները տես Strz. Die Baukunst.

եր. 320—321, պատկ. 361 և 363: Պատկ. 361 պէտք է համեմատել մեր Պատկ. 51, 53 և 59—ի հետ, մեծութիւններն էլ մօտաւորապէս նոյն չափով:

*Burekhardt. Die Zeit Constantins des Grossen. Պատկեր 55, 56:

‡Kondakoff. Ikonographia Bogomateri 1914 և 1915. SP.: Lickhastchew. Isobrajenia Bogomateri. SP. 1911.

